Ճանաչել գիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

3(396)
10.02.2015
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ԿԱՐԵՎՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԸ՝ ԱՆՑՈՒՄ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հունվարի 30-ին տեղի ունեցավ Արցախի պետական համալսարանի խորհրդի հերթական նիստը՝ խորհրդի նախագահ ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյանի ղեկավարությամբ: Մինչև օրակարգային հարցերի քննարկումը տեղի ունեցավ պարգևատրման արարողություն. Արցախի կրթության և գիտության գործի կազմակերպման մեջ ունեցած նշանակալի ավանդի և ծննդյան 65-ամյակի կապակցությամբ ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, ԱրՊՀ գիտական խորհրդի որոշմամբ, պարգևատրվեց համալսարանի բարձրագույն պարգևով՝ Ոսկե մեդալով: Համալսարանի քաղաքաշինության ամբիոնի վարիչ Ռուդոլֆ Իսրայելյանը ոլորտի զարգացման մեջ ունեցած ներդրումի և ծննդյան 75-ամյակի կապակցությամբ պարգևատրվեց ԼՂՀ վարչապետի հուշամեդալով:

Այնուհետև խորհրդի նիստը լսեց ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանի հաշվետվությունը՝ 2013-2014 ուստարում համալսարանի կատարած աշխատանքների մասին:

ԱրՊՀ-ն, լինելով բարձրագույն կրթության ոլորտում առաջատարը հանրապետությունում, կրթական և գիտամշակութային ինքնավար հաստատություն, 2013-2014 ուստարում շարունակել է իրականացնել իր գլխավոր առաքելությունը՝ գիտելիքի ստեղծումը, տարածումը և փոխանցումը, նշեց ռեկտորը: Կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում համալսարանը շարունակել է խթանել ուսանողների և դասախոսների մոտ մտավոր և անձնային որակների զարգացումը՝ իր նպաստը բերելով հանրության տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի բարեկեցության բարձրացմանը՝ կրթական գործունեության առումով:

Հետապնդելով կրթական գործունեության արդիականացման նպատակ՝ ԱրՊՀ-ն 2013-2014 ուստարում շարունակել է աշխատանքներ իրականացնել ժամանակակից պահանջներին համապատասխան ուսումնական ծրագրեր և մասնագիտություններ ունենալու ուղղությամբ: Ռեկտորը նշեց, որ մանրակրկիտ ուսումնասիրվել և համադրվել են ՀՀ համապատասխան բուհերի հետ բոլոր մասնագիտությունների ուսումնական ծրագրերը: Նրա հավաստմամբ՝ մասնագիտությունների ցանկի վերաբերյալ համալսարանի առաջարկությունների հիմքում դրվել են պետական քաղաքականության առաջնահերթությունները, կությունների հիմքում դրվել են պետական քաղաքականության առաջնահերթությունները, աշխատաշուկայի ուսումնասիրության արդյունքները, դիմորդների նախասիրությունները և համալսարանի իրական հնարավորությունները: Խոսքը կադրային ներուժի, նյութատեխնիկական բազայի հնարավորությունների մասին է:

Հաշվետու ժամանակաշրջանում ԱրՊՀ-ն մասնագետներ է պատրաստել 33 մասնագիտությունների գծով՝ 9 ֆակուլտետի, 25 ամբիոնի միջոցով, որտեղ դասավանդել են 206 հիմնական դասախոս, որից 20-ը՝ պրոֆեսոր, 45-ը՝ դոցենտ, 61-ը՝ ավագ դասախոս, 35 դասախոս: Դասախոսական կազմը երիտասարդացել է. միջին տարիքը 51 է, հինգ տարի առաջ 58 էր: Բակալավրիատի ուսանողների թիվը 2666 է, որից առկա բաժնում՝ 1469, նրանցից 571 ուսանող(39,9%) ընդգրկվել է անվճար ուսուցման համակարգում: Մագիստրատուրայի ուսանողների թիվը կազմել է 547, որից 435-ը (89,5%)՝ առկա բաժնում: Ուսանողների 19 տոկոսը բակալավրիատի և 33% մագիստրատուրայի տնտեսաիրավաբանական ֆակուլտետի ուսանողներն են: ԱրՊՀ ասպիրանտների թիվը 44 է: Ռեկտորը ցավով արձանագրեց, որ 1-ին կուրսի ասպիրանտների թիվը նվազել է՝ կազմելով 3, իսկ արդեն ընթացիկ տարվա 1-ին կուրսում ասպիրանտ չկա: Ընդհանուր առմամբ՝ համալսարանում վերջին 5 տարում նկատվում է ուսանողների թվի նվազում: Այսպես, 3 տարի առաջ ունեցած 4159 ուսանողի փոխարեն հաշվետու ժամանակաշրջանում համալսարանն ունի 3260 ուսանող: Նույն միտումը նկատվել է նաև շրջանավարտների առումով: 2012թ. 931 շրջանավարտի փոխարեն՝ 2014թ. 748 է: Վերջին 5 տարիներին շրջանավարտների 25 % տնտեսագետ և իրավաբան է, 5,8%՝ ֆիզիկայի և մաթեմատիկայի մասնագետ: 2013-2014 ուստարում առկա համակարգի ծմեռային քննաշրջանին մասնակցել է բակալավրիատի 1452 և մագիստրատուրայի 425 ուսանող: Ընդհանուր առաջադիմությունը կազմել է՝ համապատասխանաբար 85 և 92 %, գերազանցիկների թիվը՝ 153 և 79: Առկա համակարգի ամառային քննաշրջանին մասնակցել է 1469 ուսանող բակալավրիատում և 274՝ մագիստրատուրայում: Ընդհանուր առաջադիմությունը՝ 87,5 և 98%: Նշվեց, որ տարվա ընթացքում կազմակերպվել են ուսումնական պլաններով նախատեսված բոլոր փորձուսուցումները: 2-րդ կիսամյակի ընթացքում կազմակերպվել են ուսումնառությունից ուսանողների բավարարվածության սոցիալական հարցումներ:

Անդրադառնալով բուհի գիտական գործունեությանը՝ Մ. Մինասյանը փաստեց, որ համալսարանի հիմնական նպատակը շարունակում է մնալ նրա գիտական ներուժի ուղղորդումը տնտեսության զարգացմանն ու հասարակության բարեկեցության բարձրացմանը, դասախոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներում: Համալսարանի հեռահար նպատակը որպես գիտական օջախ կայացումն է, կրթական և գիտական գործունեության հավասարակշռումը: Ռեկտորը խոստովանեց, որ այս բնագավառում հաջողություններն ավելի քիչ են: Գիտությունը երիտասարդ կադրերին չի հրապուրում, տնտեսությունից առանձին հետազոտական պատվերներ չեն ստանում, դրանից ստացված համալսարանի եկամուտները շարունակում են մնալ զրոյական, իսկ ՀՀ դրամաշնորհային ծրագրերում ԱրՊՀ դասախոսների մասնակցությունը՝ դեռևս անհրաժեշտ: Այդուհանդերձ, փորձեր կատարվել են աշխատանքի հնարավորության և աշխատավարձի մակարդակի՝ դասախոսի գիտական աստիճանից կախվածության ապահովման, գիտական կոչումների շնորհման և տարակարգային առաջխաղացման գործընթացի խստացման ու ՀՀ ԲՈՀ-ի պահանջներին համապատասխանեցման ուղղությամբ: Չևավորվել է ուսանողական գիտական ընկերություն: Տարվա ընթացքում համալսարանում կազմակերպվել են ուսանողների և դասախոսների մասնակցությամբ մեկ տասնյակից ավելի գիտաժողովներ, տարաբնույթ գիտական քննարկումներ և ընթերցումներ: ԱրՊՀ-ականները մասնակցել են նաև այլ բուհերում կազմակերպված միջոցառումներին:

Ռեկտորի գնահատմամբ՝ 2013-2014 ուստարում ԱրՊՀ գիտական խորհուրդը գործել է բավական արդյունավետ: Տարվա ընթացքում հրատարակվել է Հայագիտական հանդեսի հերթական համարը, ՀՀ ԲՈՀ-ի կողմից առաջադրված պահանջներին համապատասխան՝ տպագրվել Գիտական տեղեկագրի բնագիտական և հասարակագիտական պրակները: Ընդհանուր առմամբ՝ ԱրՊՀ դասախոսները հրատարակել են 184 գիտական աշխատանք, ինչը 17%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Այլ բուհերի հետ համագործակցության առումով՝ կատարված աշխատանքները զգալի են. համագործակցության պայմանագրեր կնքվել են ՀՀ բոլոր առաջատար բուհերի հետ (12 պայմանագիր): Եվս 2-ը՝ ՌԴ բուհերի հետ: Այդ աշխատանքների համար լուրջ խթան է հանդիսացել ԼՂՀ և ՀՀ ԿԳ նախարարների կողմից ստորագրված համագործակցության պայմանագիրը: Գործակցությունը առանձնապես արդյունավետ է ուսումնամեթոդական նյութերի փոխանակման, փոխադարձ այցելությունների, նոր գրականության տրամադրման, դասախոսությունների վարման, գիտաժողովների և հոբելյանական միջոցառումների անցկացման, ուսանողական կառույցների ակտիվ գործակցության, ամառային ճամբարների կազմակերպման և այլ ձևերով: Համալսարանի գործունեության նկատմամբ առանձնահատուկ հոգատարության և կոլեկտիվի հետ ունեցած հանդիպման ժամանակ բարձրացված հարցերի լուծման, լավագույն ուսանողներին դեպի պատմական հայրենիք ուղևորվելու վաղեմի երազանքի իրականացման, գերազանց առաջադիմությամբ շրջանավարտներին հատուկ ուշադրության արժանացնելու արդեն ձևավորված ավանդույթի համար ռեկտորը երախտագիտության խոսք ուղղեց ԼՂՀ Նախագահին: Ակտիվ համագործացության համար համալսարանը երախտապարտ է նաև ԼՂՀ օրենսդիր և գործադիր, դատական մարմինների ներկայացուցիչներին, որոնք դասախոսություններով պարբերաբար հանդես են եկել համալսարանում: Այդ գործում Մ. Մինասյանն առանձնացրեց արտգործնախարարության նախաձեռնողականությունը, ինչը նպաստել է մի շարք ծրագրերի գործարկմանը: Ակտիվացել է նաև համագործակցությունը հասարակական կազմակերպությունների հետ: Կազմակերպվել են այցելություններ զորամասեր: Անընդհատ և հետևողական աշխատանք է տարվել հասարակայնության հետ կապերի զարգացման, համալսարանի վարկանիշի և հեղինակության բարձրացման ուղղությամբ:

Ուսանողների հետ տարվող աշխատանքների վերաբերյալ ռեկտորն ընդգծեց, որ նրանց հանդեպ պատասխանատվությունը շարունակում է մնալ համալսարանի գործունեության առանցքային դրույթը: Առաջնահերթությունը տրվել է ուսանողների ուսումնագիտական ձեռքբերումներին, բավարարվածությանն ու հաջողությանը՝ նրանց կարիքները դնելով համալսարանի ակադեմիական և օժանդակ ծառայությունների գործունեության, կրթական քաղաքականության և կրթական ծրագրերի մշակման հիմքում: Ընդգծվեց նաև, որ խնդիր ունեն ուսանողների հետ հետազոտական և ստեղծագործ աշխատանքի ունակության, քննադատական և վերլուծական մտածողության զարգացման հարցում:

Որոշակի աշխատանքներ են տարվել ուսանողների ինքնակազմակերպման, ինքնակառավարման, իրենց իրավունքներն ու շահերը պաշտպանելու կարողության ձևավորման, առօրյան հետաքրքիր և բովանդակալից դարձնելու ուղղությամբ: Ուսումնական տարին առավել քան հագեցած է եղել բազմաբնույթ միջոցառումներով. ավանդաբար անցկացվող գիտակրթական ծրագրեր, ուսանողական գիտաժողովներ, մարզամշակութային միջոցառումներ: Ուսման մեջ ունեցած հաջողությունների, օրինակելի վարքի, միջոցառումներին ակտիվորեն մասնակցելու համար բազմաթիվ ուսանողներ արժանացել են դրամական պարգևի, պատվոգրերի, շնորհակալագրերի: Ուսվարչության հիմնական միջոցներն ուղղվել են բարձր առաջադիմություն, ինչպես նաև սոցիալական խնդիրներ ունեցող, սակայն ուսման մեջ առաջադիմող ուսանողների խրախուսմանը, անհրաժեշտ պարագաների ձեռքբերմանը և արտագնա միջոցառումների նյութական ապահովվածությանը:

Բուհի ղեկավարության ուշադրության կենտրոնում եղել և մնում են համալսարանականների սոցիալական վիճակի բարելավման հարցերը: Միջոցներ են ձեռնարկվել ավելի կարիքավոր ուսանողներին և աշխատակիցներին նյութական աջակցություն ցույց տալու կապակցությամբ: Հետևողական աշխատանքներ են իրականացվել տնտեսական և ենթակառուցվածքների զարգացման ոլորտում: Համալսարանի տարբեր մասնաշենքերում, տարբեր լսարաններում կատարվել են բարեկարգման և վերանորոգման աշխատանքներ: Դրանց մեծ մասը՝ բարեգործական ծրագրերով: Ձեռնարկվել են միջոցներ՝ նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ: Բարելավվել են ներքին տեղեկատվական ցանցի աշխատանքերը, ձեռք են բերվել ժամանակակից սարքավորումներ: Պետական միջոցների հաշվին երեք մասնաշենքներում ներդրվել է ջեռուցման նոր համակարգ: Դատելով ներկայացված ծախսերի կառուցվածքից՝ ակնհայտ է դառնում, որ բյուջեն բուհի զարգացման երաշխիք չի տալիս. ծախսերի առյուծի բաժինը՝ մոտ 88%, կազմում է աշխատավարձը:

2013-2014 ուսումնական տարվա կտրվածքով ուսման վարձի զեղչ գործող օրենսդրությամբ ստացել է 255 ուսանող, այսինքն՝ զեղչից օգտվել է վճարովի համակարգի ուսանողների 10,3%:

Ընդհանուր առմամբ՝ զեղչվել է 18մլն 810 հազար դրամ: Ըստ բուհի կողմից իրականացրած հաշվարկների՝ ուսման վճարների 100 տոկոսանոց հավաքագրման պարագայում 2015թ. ակնկալում են ունենալ մոտ 600 մլն դրամ սեփական եկամուտ:

☞2

ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Անցած տարեվերջին ԼՂՀ գնահատման և թեստավորման կենտրոնն անցկացրեց արդեն ավանդական արտաքին ընթացիկ գնահատում հանրակրթական դպրոցներում: «Լուսարարը» ամեն անգամ անդրադառնում է արդյունքներին՝ փորձելով պարզել հանրակրթության վիճակը: Նույնն անում ենք այս անգամ ԳԹԿ տնօրեն Յուրի ՔԱՐԱՄՅԱՆԻ օգնությամբ:

-Պարոն Քարամյան, նախ ներկայացրեք, թե որ դասարաններում ինչ առարկաներից եք իրականացրել արտաքին ընթացիկ գնահատումը:

-Գնահատվել են 4-րդ, 6-րդ, 8-րդ և 11-րդ դասարանները: 4-րդ դասարան՝ մաթեմատիկա, մայրենի, ռուսաց լեզու, 6-րդ դասարան՝ մաթեմատիկա, մայրենի, 8-րդ դասարան՝ բոլոր բնագիտական (երկրաչափություն, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն), ինչպես նաև՝ հայ գրականություն, հայոց պատմություն, անգլերեն, ֆրանսերեն, 11-րդ դասարան (խորացված ուսուցում)՝ հայոց պատմություն, հանրահաշիվ, ֆիզիկա, քիմիա, անգլերեն, 11-րդ (ընդհանուր հոսք)՝ հայոց լեզու, հայոց պատմություն, կենսաբանություն, ռուսաց լեզու առարկաները, ընդհանուր առմամբ՝ 890 դասարան, 6918 սովորող (94 %): Կազմակերպչական աշխատանքները, ինչպես միշտ, դեռ սեպտեմբեր ամսում ենք սկսել. խորհրդակցություններ մեթոդմիավորման նախագահների, դասավանդող ուսուցիչների հետ, քննարկումներ գործող դասագրքերի թեմաների, մշակված թեստերի շուրջ ԿԳՆ մասնագետների հետ: Նոյեմբերի սկզբներին՝ մեկ ամիս առաջ, բոլոր թեստերը, օժանդակ նյութերը ուղարկել ենք ուսումնական հաստատություններ, որպեսզի տնօրենները ծանոթանան և կազմակերպչական առումով խնդիրներ չլինեն: Եվ պետք է ասել, որ չի լինում դեպք, որ կազմակերպիչները կամ պատասխանատուները իրենց պարտականությունները չիմանան: Գրավորների ստուգման ժամանակ ի հայտ են եկել որոշ թերություններ: Դրանց քանակը պահպանվում է նախորդ տարիների համեմատությամբ: Դրանք այն դպրոցներում են, որտեղ պատասխանատուները իրենց կողմից են: Իհարկե, ոչ բոլոր տեղերում է այդպես: Գիտեք, որ սկզբում շատ էին կեղծումները, իսկ հիմա՝ ընդամենը 7 % է, թեպետ լավ կլինի, որ դա էլ չլիներ: Դպրոցներն են ընտրել առարկաները, բացի ավագից, և մեծամասնության մոտ իրենց պատասխանատուների կողմից է անցկացվել, իսկ մենք հսկել ենք, ստուգել գրավորները և ուղարկել:

3015 սովորողների գրավոր աշխատանքների անցկացմանը մասնակցել են ԳԹԿ-ի ներկայացուցիչները, որը կազմում է 44%, իսկ մնացածը վերահսկել են միայն դպրոցի նշանակած պատասխանատուները: Իհարկե, լավ կլիներ, որ բոլոր տեղերում մենք մասնակցեինք: Խնդիրն այն չէ, որ չենք վստահում դպրոցներին, այլ որ մենք պատասխանատվություն ենք կրում մեր թերությունների համար: Տեղերից հավաքում էինք արձանագրություններ, որտեղ նշված են հանդիպած թերությունները: Եվ մեր մասնագետները պատասխանատվություն են կրում դրանց համար, աշխատում ենք բացառել դրանք, այսինքն՝ կազմակերպչական մասով լրիվ կատարված է. ինչը դրական է, պիտի շարունակվի, և շարունակում ենք: Ունենք բավական քանակի համապատասխան գրականություն թեստաբանությունից: Ուսումնասիրում ենք, որպեսզի հնարավորինս լիարժեք թեստեր մշակենք: Դրա մեջ հերոսություն չկա, մեր գործն է, պիտի կատարենք: Բայց գործը կատարելը միայն արդյունքները ցույց տալը չէ: Ըստ դրանց պետք է վերլուծություն կատարենք, տեսնենք՝ ինչ կարելի է անել արդյունքները բարելավելու ուղղությամբ:

-Այնուամենայնիվ, ինչպիսի՞ արդյունավետությամբ են դպրոցներում կազմակերպվել գնահատումները:

-Մենք վերլուծություն ենք կատարել ԳԹԿ ներկայացուցիչների կողմից որպես դիտորդ մասնակցած և միայն դպրոցի պատասխանատուների կողմից անցկացված գրավորների միջև: Միանգամից երևում են արդյունավետ անցկացված աշխատանքները: Վերցնենք Քաշաթաղի շրջանը. ԳԹԿ-ի կողմից անցկացվածի դեպքում՝ 62 % է 1-3 միավոր ստացել, իսկ դպրոցի ներկայացուցիչների կողմից՝ 15%: 9-10 միավոր ստացածները 2 % են ԳԹԿ-ի կողմից մասնակցելու ժամանակ, իրենց կողմից՝ 8%: Արդյունքները 4 անգամ տարբերություն են տալիս:

Կամ վերցնենք Ասկերանի շրջանը: Մոտավորապես նույնն է, բացի «գերազանց»-ներից: Մարտակերտի շրջանում ավելի ռեալ մոտեցում է. մեր կողմից՝ 27 % է «անբավարար», իրենց կողմից՝ 31%, «գերազանց»-ները՝ ԳԹԿ-ի կողմից՝ 2%, իրենց կողմից՝ 3 %: Մնացած տեղերում տարբերություններ կան: Գնահատման և թեստավորման կենտրոնի գլխավոր նպատակներից մեկն է՝ տրամադրել ուսհաստատություններին լիարժեք մշակած առարկայական թեստեր՝ սովորողների գնահատման նպատակով: Մենք պետք է վստահենք ուսհաստատությունների աշխատողներին:

-Հետաքրքիր է, ինչպիսի՞ն են եղել արդյունքները:

-6918 գրավոր աշխատանքներից 1632-ը՝ 24 %, գնահատվել է 0-3 միավոր: Ես արդեն չեմ ասում «անբավարար», «բավարար», «լավ» կամ «գերազանց», ցանկանում եմ ազատվել այդ բառերից: Իմ նպատակը հետևյալն է՝ ընդհանրապես ատեստատում դնել ցանկացած միավոր: Այս պարագայում կեղծումների մի որոշ մասը դուրս կգա: Դնենք միավորները, անգամ՝ «1», «2», այլ ոչ թե դրանք սարքենք «4», որը համարվի դրական: Բայց առայժմ, ցավոք, դա չի ստացվում: 4-6 միավոր գնահատվել է 3171 սովորող՝ 46%, 7-8 միավոր՝ 1723 հոգի՝ 25%, 9-10 միավոր՝ 392 աշակերտ՝ 5%: 10 միավոր ստանալու եզակի դեպքեր են եղել:

Ըստ շրջանների՝ հիմնականում նույն արդյունքներն են. Ստեփանակերտում՝ 22 % «անբավարար», Ասկերանում՝ 25 % , Մարտակերտում՝ 31%, Հադրութում՝ 23%, Շուշիում՝ 25, Քաշաթաղում՝ 23%: Տոկոսային հարաբերությունը պահպանվում է:

-Ինչպե՞ս եք գնահատում այդ վիճակը:

-Չէի ասի, որ լավ է: Լավն այն կլիներ, եթե ամեն տարի առաջընթաց ունենայինք:

եթե առաջ ասում էի վիճակը լավ է ավագ դպրոցներում (միջնակարգի համեմատ որոշ առաջընթաց կար, որը բնական է, քանզի այնտեղ խորացված են անցնում, ավելի շատ ժամաքանակով), հիմա ասում եմ՝ ավագ դպրոցը կանգնած է, չպիտի այդպես լինի: Այն արդյունքը, որ տալիս են նրանք, գոհացուցիչ չէ: Ես վերլուծություն եմ արել ըստ տարիների՝ 2010-2011 ուստարուց մինչև հիմա: Այն ժամանակ 0-3 միավոր ստացած աշակերտների քանակը հետևյալն էր՝

2010-2011 ուստարի՝ 33%

2011-2012 ուստարի՝ «ցատկ» է եղել և կազմել է 31%

2012-2013 ուստարի՝ նորից «ցատկ» է եղել և կազմել է 24%

Հիմա կանգնած է:

«Գերազանց»-ների հարցը միշտ էլ դժվար է եղել՝ 3-4 % : Դա այն թիվը չէ, որ ասենք՝ լավ է: Հինգ տարվա արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2-3 տարի է՝ կանգնած ենք: Դա մտածելու տեղիք է տալիս:

-Ըստ Ձեզ, որտե՞ղ պետք է փնտրել պատճառը:

-Սկզբում պատճառը թեստերի մեջ ենք տեսել, չափորոշիչների, բայց այդ հարցերը լուծել ենք: Ես էլ եմ արդեն հոգնել նույն բանն ասելուց: Գործը կատարել միայն արդյունքները ցույց տալու համար՝ դեռ քիչ է: Պետք է նաև մտածենք՝ ինչ կարելի է անել: Կարծում եմ՝ խնդիրը մասնագետների մեջ պետք է փնտրել: Եթե ուսուցիչը չունի այդ գիտելիքը, պետք է տանք: Վերապատրաստումների հարցում կաղում ենք:

Համալսարանն արդեն կադրերը տվել է, նրանք աշխատում են:

☞ 3

ԿԱՐԵՎՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԸ՝ ԱՆՑՈՒՄ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1 ☞

Եվս 430մլն դրամ նախատեսված է ստանալ պետական բյուջեից: Բյուջեից նախատեսված գումարը նախորդ տարվա համեմատ աճել է 150 մլն դրամով կամ մոտ 55%-ով: Դա կատարվել է սեփական եկամուտների մոտ 120 մլն-ով կամ 16,6%-ով նվազելու հետևանքով առաջացած ճեղքվածքը ծածկելու համար:

Արցախի մայր բուհը իր 45-ամյա գոյության ընթացքում ձևավորել է ավանդույթների կուռ համակարգ, սակայն միշտ ձգտել է համարժեք արձագանքել ժամանակաշրջանի մարտահրավերներին, երբեք չի խուսափել բարեփոխումներից և փորձել է դրանք իրականացնել հիմնովին և շրջահայացորեն:

Ռեկտորի հավաստմամբ՝ այսօր, երբ կառուցվածքային բարեփոխումները հիմնականում իրականություն են դարձել, կարևոր մարտահրավերը անցումն է կրթական ծրագրերի կառուցվածքային փոփոխություններից խորքային ու բովանդակային փոփոխությունների: Համապատասխան ծրագրերի անբավարար ֆինանսավորման և փոխճանաչման մեխանիզմների անկատարության պատճառով ուսանողական շարժունակությունը եվրոպական, ազգային և բուհական մակարդակներով բավարար չափով չի զարգացել, նշեց բանախոսը: Փաստ է նաև, որ պետական ֆինանսավորումը մնում է որպես հիմնական գերակայություն ինքնավար բուհերի հետագա կայուն զարգացումը երաշխավորելու համար: Այդ առթիվ բուհը պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնի ֆինանսավորման նոր ու տարբերակված աղբյուրների և ձևերի որոնմանը:

Խորհրդի նիստում լսվեցին և հաստատվեցին համալսարանի 2013 -2014 ֆինանսական տարվա արդյունքների մասին հաշվետվությունը և ԱրՊՀ 2015թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը:

Ելույթ ունեցան ուսումնական գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը (ներկայացրեց ուսումնառության որակը բարձրացնելու ուղղությամբ կատարված աշխատանքները), համալսարանական կրթության որակի ապահովման և միջազգային համագործակցության բաժնի պատասխանատու Հասմիկ Մինասյանը, քիմ-կենսաբանության ֆակուլտետի դեկան Վոլոդյա Միրզոյանը (ամբիոնի խնդիրների մասին, որոնցից ամենահրատապը ուսանողների թվի զգալի նվազումն է), ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր Վիտյա Երամիշյանը: Վերջինս ներկայացրեց իր նկատառումները, որոնց լուծումը կնպաստի ուսումնական գործընթացի բարելավմանը: Դրանցից են ուսման վարձավճարների զեղչման համակարգում և անվճար- վճարովի տեղերում ճկուն քաղաքականության ներդրումը, հեռակա համակարգում ուսանողներին և շրջանավարտների բազմահազարանոց բանակին համալսարանական կյանքին ակտիվորեն ներգրավումը:

ԼՂՀ կրթության և գիտության նախարար Ս. Ասրյանը, ելույթ ունենալով, շոշափելի համարեց համալսարանի մեկ տարվա կատարած աշխատանքները ինչպես կրթական գործունեության բարելավման, այնպես էլ արտաքին կապերի, միջոցառումների և այլ աշխատանքների գծով: Իր վերլուծությունը ներկայացնելով հաշվետվության մեջ տեղ գտած մի քանի փաստական տվյալների վրա (բակալավրիատի գերազանցիկները կազմում են 14-15 %, մագիստրատուրայի գերազանցիկները՝ 19-20%, ընթացիկ և եզրափակիչ քննությունների արդյունքներով 7 և 8 միավորներ վաստակած ուսանողներ կան համարյա բոլոր մասնագիտությունների գծով և կազմում են ապահովում են 50-60%): Դրանք որակական ցուցանիշներ են:

Ելույթում հընթացս պատասխանելով բարձրացված հարցերին՝ նախարարն ընդգծեց, որ ուսման որակի հարցերի լուծումը մեծապես պայմանավորված է դպրոց-բուհ կապով, և խնդիր է դրված յուրաքանչյուր օղակում մեծ ուշադրություն դարձնել դրան: Ճիշտ է, հանրակրթությունը դեռևս չեն այն մակարդակին չէ, որ կարողանա բուհի համար ըստ մասնագիտությունների սահմանված թվով տեղեր ապահովի, բայց այն հանգամանքը, որ միասնական քննությունների արդյունքներով բուհ են ընդունվում բավարար գիտելիք ունեցող դիմորդներ, նրանց հետ համապատասխան աշխատանքի դեպքում հնարավոր է առաջընթացի որոշակի արդյունքներ ապահովել: Համալսարանում կան արտակարգ ուսանողներ, որոնք ինչպես այստեղ, այնպես էլ հայաստանյան տարբեր կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումներում առաջնակարգ տեղեր են գրավում: Ուղղակի պետք է լինի այնպիսի քանակով և այնպիսի ակտիվությամբ, որ որակյալ կադրերի խնդիր չունենանք: Իսկ այն հանգամանքը, որ որոշ ամբիոններ չեն կարողանում անհրաժեշտ ուսանողների քանակ ապահովել, մեծ աշխատանք ունեն կատարելու դասախոսները՝ ակտիվ կապ հաստատելով դպրոցների հետ և աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ: Նախարարը մատնանշեց ֆիզմաթ ֆակուլտետի օրինակը, որը դեկան Կ. Արամյանի գլխավորությամբ բավականին լուրջ կապեր է ստեղծել դպրոցների հետ, հաճախակի է լինում այնտեղ, միջոցառումներ կազմակերպում: Ծմակահող գյուղում հիմնվել է դպրոց-ճամբար, և ամառվա ընթացքում ու հիմա էլ՝ կիրակի օրերին, դասախոսներով այդ ծորակի երեխաների հետ լրացուցիչ պարապմունքներ են կազմակերպում, ինչը նաև կխթանի, որ նրանք ընտրեն ֆիզիկա մասնագիտությունը: Ուրեմն, պետք է նման միջոցառումներ շատ կազմակերպել: Նախարարը հարցի լուծման օպտիմալ տարբերակը այս է համարում՝ դպրոցներում պետք է բարձրացնել ուսման մակարդակը, իսկ համալսարանի համապատասխան ամբիոնները պետք է աշխատանք տանեն աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ: Ինչ վերաբերում է վարձավճարների զեղչերին, ԿԳ նախարարության միջոցով կառավարությունն արդեն ներկայացրել է Ազգային ժողով՝ «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքներում փոփոխություններ մտցնելու համար, որտեղ նաև այդ զեղչերի վերաբերյալ նոր մոտեցումներն են:

Նախարարը կարևորեց օրենսդրական գործունեության ապահովման ուղղությամբ համալսարանում կատարված աշխատանքները: Ուսման որակի ապահովման առաջնահերթ քայլերից մեկը բուհի տեխնիկական վերազինումն է: Աշխատանքեր կատարվում են, բայց դա հեռու է բավարար լինելուց, և պետք է ներգրավել նաև այլ միջոցներ. այս կարծիքին է նախարարը:

Կրթության և գիտության նախարարն էլ իր հերթին առաքելություն իրականացրեց: 2014թ. արդյունքներով համալսարանի 2 դասախոսների աշխատանքեր նախարարության ամենամյա գիտական մրցանակաբաշխությունում լավագույն են ճանաչվել և արժանացել մրցանակի. բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանը՝ «Արտեմ Հարությունյանի պոեզիայի ուսումնասիրությունը» և ֆիզմաթ գիտությունների դոկտոր պրոֆեսորներ Ալբերտ Ալեքսանյանն ու Աշոտ Խաչատրյանը (ՀՀ պետական ճարտարագիտական համալսարանի ֆիզիկայի ամբիոնի վարիչ)՝ «էլեկտրականություն և մագնիսականություն» ուսումնաօժանդակ ձեռնարկի համար: Ս. Ասրյանը նրանց հանձնեց վկայագրեր:

Համալսարանի մեկ տարվա աշխատանքը խորհուրդը բավարար գնահատեց

Քննարկված հարցերի վերաբերյալ ընդունվեց համապատասխան որոշում:

Նիստն ամփոփեց ԼՂՀ վարչապետը՝ մի շարք հարցերի լուծման առնչությամբ իր տեսակետները ներկայացնելով և ակնկալելով, որ նախաձեռնություններ կլինեն նաև ներքևից՝ համալսարանից, և պատրաստակամություն հայտնեց՝ ընդառաջել դրանց:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԸՆԹԱՑՔ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՆՈՐ

2 ☞

Ունենք այն, ինչ ունենք. եղածը դա է, այդ մարդիկ են դպրոցում աշխատում, ուրեմն պիտի նրանց սովորեցնենք, բացատրենք: Ես այդ հարցի մասին շատ եմ մտածել: Ինչպե՞ս վարվել՝ գուցե ուսուցման ձևե՞րը փոխենք: Տարրական դպրոցից է հիմա սկսվում ցածր որակը: Ինչու՞ պետք է տարրական դպրոցում 17 տոկոս «անբավարար» ունենանք, երբ տվել ենք այնպիսի թեստեր, որ ընդհանրապես «անբավարար» չպետք է լինի: Կամ՝ 12 տոկոս «գերազանց»-ը շատ քիչ է, դա նշանակում է, որ այդտեղից պիտի սկսենք: Մտածենք ուսուցման ձևերը փոխելու մասին: Կարող է դասապրոցեսը սխալ ձևով է անցկացվում: Նորից եմ ասում, խորը վերլուծություն պետք է կատարել: Հիմա պիտի ուրիշ «հրում» լինի: Այստեղ արդեն ուսուցչի դերն է շեշտվում: Ուսուցիչներ կան, որ և՛ գիտելիք չունեն, և՛ մեթոդիկայից են հեռու և՛ բավարար վերապատրաստում չեն անցնում: Եթե տեղի մասնագետներն անցկացնեն վերապատրաստումները, իմ կարծիքով, ավելի պատասխանատվություն կցուցաբերեն: Թող ներեն ինձ Հայաստանից եկած մասնագետները, որոնք, ինչ խոսք, բարձր մակարդակի են, բայց նրանք մի կարճ ժամանակ դասախոսում են և գնում ու պատասխանատվություն չեն կրում այդ ուսուցիչների արդյունքների համար: Իմ կարծիքով, եթե տեղի մասնագետներն անցկացնեն, ավելի արդյունավետ կլինի, նախարարությունը նրանց կպարտավորեցնի միշտ ուսուցչի կողքին լինել, վերապատրաստումներ անցկացվեն ամբողջ ուստարվա ընթացքում, վերապատրաստող խումբը աշխատի տեղերում: Գլխավորը դասավանդողն է՝ ուսուցիչը: Մենք օժանդակ մարդիկ ենք, աջակցում ենք ուսուցչին, որ ճիշտ կատարի իր աշխատանքը, մնացածը նրա ձեռքերում է: Ծախսերի մեծ մասը պիտի ուղղենք ուսուցիչների վերապատրաստմանը, ընդ որում՝ արդյունավետ վերապատրաստմանը: Եթե պետք լինի զրոյից սկսել, սկսենք տարրական դասարանից: Կրթության գերազանցության ազգային ծրագիրը նպատակ ունի ավագ դպրոցից սկսել, բայց ճիշտը, իմ կարծիքով, տարրականից սկսելն է, որպեսզի բազա ստեղծենք: Մի խոսքով, ոչ թե վերապատրաստում՝ հանուն վերապատրաստման, այլ արդյունավետ վերապատրաստում՝ պատասխանատվության զգացումով, իրական գնահատումով ու ատեստավորումով: Մինչև այդ քայլերին չգնանք, ուսուցչին չնախապատրաստենք, չենք հասնի մեր նպատակին: Ինչքան մենք մեղմ վիճակ ստեղծենք, այնքան վատ է լինելու: Չասենք՝ պատճառը ծրագիրն է, դասագիրքը. այդ ամենը լրիվությամբ ուսուցչից է կախված: Ես միշտ ասում եմ՝ ինչքան մենք թաքցնենք վատ ուսուցչին, մեկ է, մի տեղից դուրս է գալու: Չպիտի վախենանք բացահայտումներից: Հեղափոխություն անել պետք չէ, բայց կտրուկ քայլեր պետք է կատարվեն: Եվ եթե այդ կտրուկ քայլերին ուսուցիչը չի համապատասխանում, նրանից պետք է ազատվել: Մենք պետք է մասնագետ պատրաստենք, այլ ոչ թե նշանակենք թույլ գիտելիքներով մեկին և ասենք, որ մասնագետի կարիք չունենք: Բոլորն էլ ավարտում են դպրոցը, հիմնական մասը՝ ընդունվում բուհ. վիճակը որտե՞ղ է վատ: Ինչքա՞ն թաքցնենք այդ երևույթը: Պետք է գնալ կտրուկ քայլերի, կոնկրետ վերապատրաստումների առումով՝ կոշտ դիրքորոշում ունենանալ, որպեսզի դրանք ոչ թե ձևական, այլ արդյունավետ անցկացվեն:

Հարցազրույցը վարեց
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

ԹՈՂ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՇՆՈՐՀԻ ԼՈՒՅՍԸ ՄՏՆԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿՐԹՕՋԱԽ

Շուշիի Խ.Աբովյանի անվան հիմնական դպրոցը սիրով ընդունեց Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի՝ «Դիջիթեք- 2015»-ին մասնակցելու հրավերը, և հունվարի 26-30-ը մասնակցեցինք «Դիջի» շաբաթին:

Մենք ողջունում և գնահատում ենք կրթահամալիրի այս կարևոր, անհրաժեշտ և օգտակար նախաձեռնությունը, որը նպատակ ունի ուսումնական գործընթացում խթանել թվային միջոցների արդյունավետ կիրառման փորձն ու ձեռքբերումները, թվային նոր գործիքների և հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրումը, քանզի անհնարին է պատկերացնել ժամանակակից դպրոցն առանց անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության: Հնարավորության սահմաններում անհրաժեշտ է դպրոցն ապահովել համակարգիչներով, ցանկալի է, որ դպրոցում մայրենիից հետո այն լինի երկրորդ լեզուն, երկրորդ գրագիտությունը:

Իզուր չէ ասված. «Այն ժողովուրդը, որը կկարողանա հնարավորինս լրիվ արագ ու կատարյալ տիրապետել մարդկության նորագույն գիտելիքներին և դրանք զարգացնել, ձեռք կբերի անհրաժեշտ հզորություն»: Մեր պարագայում այն առավել ևս կարևորվում է երկրի առջև ծառացած գոյատևման, ժողովրդավարական և քաղաքացիական հասարակության ձևավորման, համազգային կառույցների ստեղծման հրատապ խնդիրների հրամայականով:

Ժամանակակից հաղորդակցման նոր տեխնոլոգիաներին տիրապետելը կարևորվում է նաև այն առումով, որ մեզ պարտադրված պատերազմը, ցավոք, դեռ շարունակվում է, շարունակվում է այլ ոլորտներում, այլ հարթություններում: Եվ անտեսանելի այդ պատերազմը ավելի վտանգավոր է, ավելի շատ ծանր հետևանքներ կարող է ունենալ, քան մարտադաշտում: Մեր խնդիրն է՝ դիմակայել մտքերի, գաղափարների, տեղեկատվական, հոգեբանական այդ դժվարագույն մարտահրավերներին և ամեն կերպ ձգտել չպարտվել:

Տեղին է հիշել, որ նման սառը պատերազմի հետևանքով փլուզվեց խորհրդային գերտերությունը: Ցավոք, այժմ ևս շարունակվում է այդ մոդելի օգտագործումը այս կամ այն երկրում՝ աշխարհում եղանակ ստեղծող մեծ տերությունների կողմից:

Մեկ նկատառում ևս. նախկինում գիտության զարգացմանը նպաստող և ստեղծագործ ու գիտական աշխատանքով զբաղված մարդկանց կյանքը շատ հաճախ չէր հերիքում սկսած որևէ ստեղծագործ ու գիտական գործ ավարտին հասցնել՝ ձեռքի դանդաղ աշխատանքի պատճառով: Այսօր այն մի քանի տասնյակ անգամ արագացված է և՛ ժամանակի տնտեսման, և՛ հեռավորության կրճատման առումով:

Իրապես, այստեղ ստեղծված են հրաշալի պայմաններ ինքնադրսևորվելու, ինքնակրթվելու, ինքնազարգանալու, ինքնաճանաչման և ինքնագնահատման համար (վերջին երկուսը համեմատաբար բարդ է ու դժվարին):

Ճիշտ է ասված. «Քաջեր միշտ էլ կան, ասպարեզ է պետք», իսկ կրթահամալիրի պարագայում ասպարեզը կա, յուրօրինակ խիզախողներ են պետք:

Նման միջավայրում դյուրին է ճիշտ պատասխանել «Ի՞նչ դառնալ» հարցին, որը նպաստում է դպրոցականի մասնագիտական կողմնորոշմանը: «Դիջիթեք-2015»-ի մասնակիցները շատ ու շատ ծրագրերի կյանքի կոչման առումով կրթահամալիրին աշակերտելու կարիք ունեն:

Կրթահամալիրում ուսումնական գործընթացին զուգահեռ պահում և պահպանում են նաև մեր ազգային մշակութային արժեքները (արհեստներ, արվեստներ, ժողովրդական երգ ու պար)՝ այն սերունդներին անթերի փոխանցելու նպատակով: Չէ՞ որ յուրաքանչյուր ժողովուրդ աշխարհին ներկայանում է նախևառաջ իր մշակույթով: Պահենք ու պահպանենք մեր ազգային ինքնատիպ ու հարուստ մշակույթը: Այլ դպրոցներում այդ ուղղությամբ տարվող աշխատանքները, մեղմ ասած, խորքային չեն, և որպես այդպիսին միայն ու միայն փաստ է արձանագրվում՝ նաև հնարավորություններ ու պայմաններ չունենալու պատճառով:

Կենդանի երաժշտությամբ ուղեկցվող կրթահամալիրի բոլոր դպրոցների առավոտյան ընդհանուր պարապմունքները աշակերտներին հոգեբանորեն տրամադրում են դասերին:

Ծրագրով նախատեսված տարբեր ոլորտների ուսանելի փորձառություն ունեցող մասնագետներ են հրավիրվել դպրոց՝ վարպետության դասեր վարելու նպատակով (համացանցի անվտանգության մասնագետ, ինժեներներ, լրագրողներ, նկարիչներ, ոսկերիչ, կրթահամալիրի ծնողներ և այլն):

Ուսանելու շատ բան կար նաև վարպետության դասերին: «Նուռ»-ի (Արման Դավթյան) հետ հանդիպումը մի այլ խորհուրդ ուներ. նա իր անկեղծ խոսքով անկեղծության մթնոլորտ ստեղծեց: Եվ մասնակիցները անկաշկանդ երկխոսության մեջ մտան: Արման Դավթյանի՝ ուսումնատենչ մարդու տեսակը որպես օրինակ ունենալու անհրաժեշտություն կա բոլոր դպրոցներում, մանավանդ՝ մեր ժամանակներում: Նա ճանաչված նկարիչ է, քանդակագործ, ոսկերիչ, նպատակ ունի բժշկի մասնագիտություն էլ ստանալ: Իր խորին համոզմամբ՝ բժշկի մասնագիտությունը շատ ու շատ թելերով կապված է արվեստի ու արհեստի հետ:

Նրա նշանաբանն է՝ սովորել, սովորել, սովորել հնարավորինս շատ: Երջանկություն է համարում սիրած աշխատանքով զբաղվելը: Գաղտնիք չէ, որ սիրով կատարած աշխատանքը դրական միջավայր է ստեղծում, իսկ աշխատանքը կյանքն իմաստավորում է բոլոր առումներով:

Շնորհակալություն ենք հայտնում կրթահամալիրի տնօրեն Ա. Բլեյանին, որ կազմակերպեց նաև հետաքրքիր և ճանաչողական էքսկուրսիաներ (էջմիածին, Գառնի, Գեղարդ, Եռաբլուր, Մատենադարան, գիշերային Երևան) «Դիջիթեք -2015»-ի մասնակիցների համար:

Առավել հետաքրքիր էր տոնական Մեդիաուրբաթը, որին մասնակցեցին կրթահամալիրի բոլոր դպրոցները և հյուրերը:

Հոգեպարար էր Դպրոց-պարտեզի փոքրիկների ելույթը:

Էլիզան և Սուրենը (Գեղարվեստի ավագ դպրոց) հիացրին ներկաներին իրենց հմայիչ կատարումներով: Ուսանելի էր Հիմնական և Նոր դպրոցների դասավանդողների ազգային պարը: Այո, կրթահամալիրում պարում են մեծ ու փոքրով: Մեդիաուրբաթը ավարտվեց միասնական պարով՝ միասնության կոչ անելով ներկաներին:

Կրթահամալիր եկավ նաև սիրո բարեխոս Սբ. Սարգիսը՝ իր բարեխոսությունը բերելով կրթօջախի այն աշխատողներին, որոնք դեռ իրենց երկրորդ կեսը չեն գտել, և սեր ու հավատարմություն՝ արդեն կայացած ընտանիքներին:

Այո, միասնությունը զորեղ ուժ է, իսկ պառակտումը՝ ամենահզոր զենքը նրա դեմ:

Մենք պետք է հավատարիմ մնանք մեր մեծերի՝ մեզ կտակած միասնության պատգամին:

Այն խնդիրները, որոնք կյանքի են կոչվում կրթահամալիրում, պահանջում են բոլորանվեր կամք ու վճռականություն, ջանք ու եռանդ, ուժ ու կորով, մեծ նվիրում և յուրօրինակ խիզախում:

Մեր դպրոցի խնդրանքով, ըստ ներկայացված հայտի, կրթահամալիրը մեզ նվիրեց 120 անուն գիրք, որի համար ևս շնորհակալ ենք:

Անչափ գոհ ենք հրավերի, ջերմ ընդունելության և հատուկ հոգածության համար:

Թող շարունակական լինեն կրթահամալիրի ընդօրինակելի ուսումնական նախաձեռնությունները:

Թող կրթահամալիրի շնորհի լույսը մտնի յուրաքանչյուր կրթօջախ…

Նազիկ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
ԼՂՀ վաստակավոր մանկավարժ

ՄԻՐԻԿ

Վերջերս աշխատանքային այցով գտնվում էի Քաշաթաղի շրջանի Աղավնո գետի ավազանում, որտեղ կա 6 համայնք՝ Լեռնահովիտ, Հակ, Միրիկ, Մոշաթաղ, Ծիծեռնավանք և Աղավնո: Միրիկում այցելեցի դպրոց, զրուցեցի ուսուցիչների, աշակերտների հետ: Միրիկի դպրոցի տնօրեն Նաիրա Սարգսյանը կրթօջախը ղեկավարում է 2009 թվականից,իսկ դպրոցը գործում է 1995 թվականից՝ գյուղի վերաբնակեցումից մեկ տարի անց: 2000 թ. կառուցվեց նոր մասնաշենքը, և այժմ ունի մասնակի նորոգման խնդիր: 14 մանկավարժներից վեցը դպրոցի նախկին շրջանավարտներն են: Սովորում է 27 աշակերտ՝ 7 համակարգ-դասարանով: Տարրական դասարաններում կա 14 աշակերտ, միջին օղակում՝ 8, իսկ 11-12-րդում՝ 5: Դպրոցն ապահովված է մանկավարժներով, դասագրքերով, գույքով: 2014 թվականին տարածքում միացվեց համացանցը, սակայն առայժմ դպրոցում այն չի գործում: Շրջանի հանրակրթական դպրոցների ՊՈԱԿ-ների տնօրեն Հովի. Սահակյանը տեղեկացրեց, որ ԼՂՀ ԿԳ նախարարության միջնորդությամբ մոտակա օրերին հարցը լուծում կստանա: Վերջերս Միրիկ համայնքը մասնակցեց ԼՂՀ Մե նախարարության կազմակերպած «Մշակութային խաչմերուկ» մրցույթին, և հիմնականում դպրոցի անձնակազմն էր մասնակիցը:

Կրթօջախի երկրորդ դասարանում սովորում է 4 աշակերտ: Շախմատի դասին զրուցեցի երեխաների հետ: Միհեր Ադամյանը և Հարություն Ղուկասյանը ցանկանում են բժիշկ դառնալ, որ մարդկանց բուժեն, սիրում են նաև շախմատ խաղալ: Խեչումյան Արսենն էլ որոշել է հասարակական կարգը պաշտպանել: Իսկ միակ աղջիկը՝ Նելլի Ստեփանյանը, հայտնի պարուհի է դառնալու: Դասվար Անուշ Հայրապետյանը գոհ է իր սաներից. լավ են սովորում, կարգապահ ու բարի երեխաներ են: 4-րդ դասարանում նույնպես 4 աշակերտ կա: Նարեկ Եգորյանը խոստովանեց, որ հարվածային է, իսկ սիրած մասնագիտությունը վարորդությունն է: Ազատ ժամերին պապի հետ շախմատ է խաղում: «Մեկ-մեկ պապս է հաղթում, իսկ ես՝ ավելի շատ»,- ասաց Նարեկը: Դանիել-յան Սիլվին դեռ մտածում է՝ ինչ մասնագիտություն ընտրի, թերևս բժշկությունն է նրա համար ավելի կարևոր: Լավ է սովորում բնագիտական առարկաները, հատկապես՝ մաթեմատիկան: 11-12-րդցիները նույն համակարգ-դասարանում են սովորում: Երկվորյակներ են Նվարդ և Երվանդ Մարտիրոսյանները: Այս տարի ավարտելու են դպրոցը: Նվարդը որոշել է ընդունվել մանկավարժական քոլեջ Երևանում, իսկ Նվերը ոսկերիչի մասնագիտություն է ընտրելու: Նրանց համադասարանցի Վարսիկ Հովհաննիսյանը չի որոշել հետագա անելիքը: Միրիկում կա 35 նախադպրոցական երեխա: Սա էլ հավաստիք է, որ հետագայում դպրոցն ավելի շատ աշակերտ է ունենալու: Մնում է՝ նորոգվի դպրոցի շենքը:

Զոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 4 - ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Թեստի լրացման կարգը

Ընտրովի պատասխանով առաջադրանքներում տրված է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Առաջադրանքներին պատասխանելու համար պետք է ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ:

Օրինակ՝ 1)
2)
3)
4)

Եթե գտնում եք, որ պատասխանը սխալ եք նշել, նշված պատասխանի վրա դնում եք X նշանը՝ ☒, և նոր շրջանակի մեջ վերցնում ճիշտ պատասխանի համարը:

Կարճ պատասխան պահանջող առաջադրանքներից հետո հատկացված տեղում գրել պատասխանը:

2. Գրավոր աշխատանքի գնահատման չափանիշները

Ընտրովի և կարճ պատասխան պահանջող առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Թեստերի՝ ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքների (ենթաառաջադրանքների) գնահատման չափանիշները տրվում են յուրաքանչյուր առարկայի ուղեցույցում:

Ամփոփիչ վերջնական գնահատականը որոշվում է թեստի առաջադրանքներից աշակերտի վաստակած բոլոր միավորների գումարից, որը համապատասխանեցվում է գնահատման 10 միավորանոց համակարգին՝ համաձայն հետևյալ սանդղակի:

Միավորը	Գնահատականը
0-1	1
2	2
3-4	3
5-7	4
8-9	5
10-12	6
13-14	7
15-16	8
17	9
18	10

Թեստ-գրքույկը լրացվում է կապույտ գրիչով, իսկ ստուգումը կատարվում է կարմիր գրիչով:

3. Աշխատանքի համար հատկացվող ժամանակը

Յուրաքանչյուր առարկայի թեստի կատարման համար հատկացվում է 45 րոպե:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը դուք կարող եք օգտագործել սևագրության համար:

ՄԱՅՐԵՆԻ

Թեստի կառուցվածքը և առաջադրանքների գնահատման չափանիշները

Թեստը պարունակում է որևէ տեքստ, որի հիման վրա ձևավորված են թեստի 1-8-րդ առաջադրանքները, ըստ որի ստուգվում են տեքստի ընկալման կարողությունները ու կապակցված խոսքի հմտությունները:

1. Տրվում է 7 հարց՝ տեքստի բովանդակության վերաբերյալ, որոնցից 2-ը ընտրովի պատասխանով են՝ պատասխանի 4-ական տարբերակներով: Երեքին պետք է պատասխանի ինքնուրույն (բառով կամ նախադասությամբ)[1], իսկ երկուսի կիսատ միտքը պետք է շարունակի:

2. Տեքստում բայերից 4-ը տրվում են փակագծերում ուղիղ ձևով՝ անորոշ դերբայով: Աշակերտը, ելնելով տեքստի բովանդակությունից, պետք է տրված առաջադրանքում ընտրի այն տարբերակը, որում համապատասխան անորոշ դերբայի դիմաց ճիշտ կամ սխալ է տրված այն բայաձևը՝ ժամանակաձևը, դեմքը, թիվը, որով բայը պետք է հանդես գա տեքստում:

9-16-րդ առաջադրանքները անկախ առաջադրանքներ են, որոնցով ստուգվում են ուղղագրական, բառագիտական, քերականական գիտելիքներ:

1. Ուղղագրություն

Տրվում են 4 բառակապակցություններ, որոնցից յուրաքանչյուրի թավ գրված բառում տառ կամ տառակապակցություն է բաց թողնված: Դրա տեղում դատարկ վանդակ է: Աշակերտը պետք է արտագրի այդ բառերը տրված տողերի վրա՝ լրացնելով բաց թողած տառը կամ տառակապակցությունը[2]:

2. Բառագիտություն

ա. Իմաստաբանություն. բառի՝ ուղղակի կամ փոխաբերական իմաստով գործածված լինելը տեքստում, կամ բառակապակցության՝ դարձվածք կամ ոչ դարձվածք լինելը,

բ. Բառակազմություն. տրված բառերի իմաստը, հոմանիշությունը, հականիշությունն այլ բառերի հետ:

o Տրվում են 4 բառեր, և դրանցից յուրաքանչյուրի դիմաց ճիշտ կամ սխալ գրվում է, թե ինչպիսի բառ է ըստ կազմության՝ պարզ, բարդ (հոդակապով, անհոդակապ), ածանցավոր (նախածանցավոր, վերջածանցավոր): Աշակերտը պետք է ընտրի ճիշտ կամ սխալ տարբերակը՝ պահանջին համապատասխան:

3. Չևաբանություն

ա. Խոսքի մասեր.

o Տրվում են բառեր, որոնց դիմաց ճիշտ կամ սխալ գրվում է տվյալ բառի խոսքի մասային պատկանելությունը՝ գոյական, ածական, թվական, բայ: Պետք է գտնել ճիշտ կամ սխալ տարբերակը՝ պահանջին համապատասխան:

o Տրվում են գոյականներ. աշակերտը պետք է որոշի դրանց՝ հատուկ, թե հասարակ, անձ, թե իր ցույց տվող, կամ եզակի, թե հոգնակի թվով գործածված լինելը:

բ. Բառերի ձևափոխություն և տեղադրում տրված նախադասության բաց թողած տեղերում:

o Տրվում է 1 նախադասություն, որում բառեր են բաց թողնված: Բաց թողնված բառերը տրված են փակագծերում ուղիղ ձևերով և ըստ տեղադրման հերթականության: Անհրաժեշտ է տրված բառերը դնել համապատասխան հոլովով, թվով և առումով և տեղադրել նախադասության մեջ:

4. Շարահյուսություն

ա. Նախադասություն.

o Տրվում է նախադասություն, որում անհրաժեշտ է գտնել և տրված տողի վրա դուրս գրել նախադասության համապատասխան անդամը, տրված հարցին պատասխանող անդամը կամ կոչականը՝ պահանջին համապատասխան:

o Տրվում է պարզ համառոտ նախադասություն, որը պետք է ընդարձակել՝ օգտագործելով փակագծերում տրված բառերը:

o Ըստ համապատասխան երանգի՝ պատմողական, հարցական, հրամայական, բացականչական, աշակերտը պետք է գրի տրված նախադասության տեսակը, կամ ըստ կազմության՝ պարզ, բարդ, համառոտ, ընդարձակ, ընտրի տրված նախադասության տեսակը՝ պահանջին համապատասխան:

բ. Կետադրություն.

Աշակերտը պետք է արտագրի տրված նախադասությունը և դնի բաց թողած կետադրական նշանը բարդ նախադասության բաղադրիչների կամ բազմակի անդամների համար, կամ նշանները՝ կոչականի համար:[3]

---

[1] Տեքստի վերաբերյալ տրվող հարցեր պարունակող ընդարձակ պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր, եթե հարցի պատասխանը ըստ տեքստի ճիշտ է: Քերականական և ուղղագրական սխալները հաշվի չեն առնվում:

[2] Յուրաքանչյուր ճիշտ գրված բառի համար տրվում է 1 միավոր (ընդամենը՝ 3 միավոր):

[3] Կետադրության վերաբերյալ առաջադրանքի ճիշտ կետադրման համար տրվում է 1 միավոր: Եթե տվյալ կետադրական կանոնը պահանջում է 2 կետադրական նշան (օրինակ՝ կոչականը՝ շեշտ և ստորակետ), ապա 1 միավոր է տրվում այն դեպքում, եթե 2 նշանն էլ ճիշտ են դրված: Ցանկացած այլ (ավելորդ կամ սխալ) կետադրական նշանի գործածության դեպքում այս առաջադրանքին միավոր չի տրվում, եթե անգամ ճիշտ նշանակված է պահանջվող կետադրությունը:

Որոշ կետադրական նշաններ (օրինակ՝ ուղղակի խոսքի անջատման գիծը, հարցական նշանը) դրվում են այն պատճառով, որ աշակերտը դեռևս ծանոթ չէ կետադրական տվյալ կանոններին, իսկ առանց դրանց նախադասությունը կարող է անհասկանալի լինել: Այդ նշանների բացթողումը աշակերտի կողմից պետք է համարել անուշադրության սխալ: Այդպիսի սխալների համար միավոր չի հանվում:

Թեստը պարունակում է 16 առաջադրանք: Յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, իսկ 9-րդ առաջադրանքում՝ յուրաքանչյուր ճիշտ գրված բառի համար՝ 1 միավոր: Թեստի առավելագույն միավորը 18 է:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Թեստը բաղկացած է 18 առաջադրանքներից՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ, կարճ պատասխանով և ընդարձակ պատասխանով առաջադրանքներ:

Ընտրովի պատասխան են պահանջում 1-11-րդ առաջադրանքները:

Կարճ պատասխանով են թեստի 12-16-րդ առաջադրանքները:

Ընդարձակ պատասխան են պահանջում 17-րդ, 18-րդ առաջադրանքները: Դրանց համար պետք է ներկայացվի լուծման պահանջվող ընթացքը առաջադրանքից հետո հատկացված տեղում:

1-18-րդ առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

ԹԵՍՏԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐ

ՄԱՅՐԵՆԻ

1-8-րդ առաջադրանքները կատարել՝ ըստ տրված տեքստի:

- Երեխայի կյանքը հեքիաթ է,- այսպես է սկսում Մարտիրոս Սարյանն իր մանկության պատմությունը:

Նա երեք տարեկան էր, երբ հայրը՝ վարպետ Սարգիսը, որ հողմաղացներ պատրաստող հյուսն էր, Նոր Նախիջևանից ոչ հեռու՝ տափաստանի կանաչ մի անկյունում՝ շամբուտներով ծածկված գետակի ափին, տուն կառուցեց իրենց ընտանիքի համար: Հում աղյուսներից կառուցված մի փոքրիկ տնակ, որ նրան պալատ էր թվում: Սարգիս և Ուստիանե տանտերերն ունեին հինը երեխա: Դրանցից մեկը Մարտիրոս Սարյանն էր:

Մինչ վարպետ Սարգիսը **(կառուցել)** տունը, նրանց ընտանիքը ապրում էր տափաստանում, գիշերում բաց երկնքի տակ: Փոքրիկ Մարտիրոսը անկողին էր մտնում ու երկար նայում աստղազարդ երկնքին: Աստղերը՝ ասես կենդանի էակներ, թարթելով աչքերը, ինչ-որ գաղտնիք էին հաղորդում նրան:

Լույս ու խինդով լցված փոքրիկ Մարտիրոսը **(վազել)** թիթեռների, ասես արևի ճառագայթներից հյուսված գույների հետևից, որ թռչում են հեռո՜ւ, շատ հեռու…

Ո՞ւր է **(թռչել)** վառ թիթեռնիկը: Որտե՞ղ է թաքնվում փոշոտված ու ծիրանագույն արևը… Հիմա նա նման է մուգ կարմիր մեծ խնձորի…

- Հե՛յ, տղա՛ս: Ո՞ւր ես, ինչո՞ւ ես այդքան հեռու գնացել…

Ո՛չ, նա չի ուզում տուն վերադառնալ: Կանաչ, կապույտ, դարչնագույն խոտերը գլխովին ծածկել են նրան, ու աչքերում կրակի նման շողում են ծաղիկները:

Ա՜խ, դեռ ինչքան փոքր է ինքը: Ի՜նչ դանդաղ է մեծանում: Անգամ խոտերն անցել են իրենից: Իսկ չէ որ ինքը պետք է տեսնի, թե ուր է գնում արևը, որտեղ է ապրում: Եթե թռչել կարողանա՜ր…

Ասում են՝ կան մարդիկ, ովքեր կարողանում են օդ բարձրանալ…

- Մարտիրո՜ս, Մարտիրո՜ս, բալի՛կ ջան, ո՞ւր ես…

- Այստեղ եմ, մայրի՛կ: Գնում եմ արևի հետևից…

Մանկական այս տեսիլքներից ու տպավորություններից հետագայում պետք է **(ծնվել)** սարյանական զարմանահրաշ, բերկրանքով լի նկարները:

1-3-րդ առաջադրանքների պատասխանները գրի՛ր համապատասխան տեղում:

1. Ո՞վ էր Մարտիրոս Սարյանի հայրը:

Պատասխան՝_____

2. Փոքրիկ Մարտիրոսին ի՞նչն էր պալատ թվում:

Պատասխան՝_____

3. Մարտիրոսը ինչպե՞ս զգաց, որ ինքը փոքր է:

Պատասխան՝_____

4-5-րդ առաջադրանքներում շարունակի՛ր միտքը:

4. Երբ փոքրիկ Մարտիրոսը անկողին էր մտնում ու երկար նայում աստղազարդ երկնքին, աստղերը՝_____
_____
_____

5. Փոքրիկ Մարտիրոսի մանկական տեսիլքներից ու տպավորություններից հետագայում պետք է ծնվեին_____
_____

*6-7-րդ առաջադրանքներում **ճիշտ** պատասխանի համարը վերցրո՜ւ շրջանակի մեջ:*

6. Ի՞նչն էր մտահոգում Մարտիրոսին:

1) Ու՞ր է թռչում վառ թիթեռնիկը:
2) Ինչո՞ւ է մայր մտնում ծիրանագույն արևը:
3) Ինչո՞ւ է ինքը արագ մեծանում:
4) Ո՞րն է կախարդական բանալու գաղտնիքը:

7. Որտե՞ղ տուն կառուցեց Մարտիրոսի հայրը՝ վարպետ Սարգիսը:

1) Նոր Նախիջևանից բավական հեռու:
2) Տափաստանի կենտրոնում:
3) Շամբուտներով ծածկված գետակի ափին:
4) Բարձր բլրի վրա:

8. Տեքստի՝ փակագծերում դրված բայերը տարբերակներում ներկայացված են որոշակի դեմքով, թվով և ժամանակով: Ըստ տեքստի՝ ո՞ր տարբերակի բայի ձևն է սխալ:

1) **կառուցել** – կառուցում էր
2) **վազել** – վազում էր
3) **թռչել** – թռչում է
4) **ծնվել** – ծնվելիս

9. Արտագրի՛ր ընդգծված բառերը՝ վանդակի փոխարեն լրացնելով բաց թողած տառը կամ տառակապակցությունը:

զվար☐ երեխա
հետաքրքիր **հաղոր**☐**ում**
չո☐**որդ** դասարան

Պատասխան՝_____

ԹԵՍՏ

10. Ո՞րն է տրված նախադասության ենթական:

Ընդհատելով խլուրդին՝ ճագարը բաճկոնի գրպանից հանեց ժամացույցը և շարունակեց ճանապարհը:

1) ժամացույց
2) ճանապարհ
3) բաճկոն
4) ճագար

11. Արտագրի՛ր նախադասությունը՝ նշանակելով կետադրությունը:

Մեսրոպը մոտենում է հորը, նրան մեկնում երեք ոսկե խնձորները և ասում.
- Ահա հայրիկ ոսկե խնձորները:

Պատասխան՝_____
_____

12-16-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի համարը վերցրո՛ւ շրջանակի մեջ:

12. Ո՞ր նախադասության ընդգծված բառակապակցությունն է դարձվածք:

1) Այս ամառ **երկնքից կրակ էր թափվում**:
2) **Խաղաղ երկնքում** կայծկլտում էին պայծառ աստղերը:
3) Լոռվա բարձր աշխարհում մաղում է **առաջին ձյունը**:
4) Քարայծը թռչկոտում էր **բարձրաբերձ ժայռերի** ճակատին:

13. Ո՞ր տարբերակի բառերը հոմանիշներ չեն:

1) **ժողովել** - լրանալ
2) **աշխատասեր** - ժրաջան
3) **կատար** - գագաթ
4) **նիրհ** - քուն

14. Տրված բառերից որի՞ դիմաց է սխալ նշված նրա տեսակը՝ ըստ կազմության:

1) **անտառահավ** – բարդ բառ
2) **սարյակ** – ածանցավոր բառ
3) **արծիվ** – պարզ բառ
4) **ագռավ** – պարզ բառ

15. Տրված բառերից յուրաքանչյուրի դիմաց նշված է, թե այն ինչ խոսքի մաս է: Ո՞ր տարբերակում է սխալ նշված:

1) **անտառում** – գոյական
2) **քչքչան** – բայ
3) **հարյուր** – թվական
4) **լեռնային** – ածական

16-րդ առաջադրանքի պատասխանը գրի՛ր համապատասխան տեղում:

16. Օգտագործելով տրված բառերը՝ ընդարձակի՛ր հետևյալ պարզ համառոտ նախադասությունը:

Արծիվը ճախրում էր:
(սևափետուր, լեռներ)

Պատասխան՝_____
_____

ԹԵՍՏԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐ
ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

1- 11-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանի համարը վերցրո՛ւ շրջանակի մեջ:

1 Երկնիշ թվերից քանիսի՞ միավորն է 8:

1) 8
2) 9
3) 10
4) 11

2 329, 452, 27, 38, 121, 276 թվերից միայն կենտ թվերի գումարն է՝

1) 766
2) 512
3) 450
4) 477

3 Ո՞ր թվի հարյուրյակների քանակն է բազմապատիկ 4 – ին:

1) 3246
2) 5382
3) 86805
4) 48328

4 Ո՞ր թիվն է 7 – ի վեցապատիկից մեծ 2 անգամ:

1) 21
2) 42
3) 84
4) 44

5 Ո՞րն է այն թվանշանը, որը տեղադրելով աստղանիշի փոխարեն՝ կստանաս անհավասարություն: $6523 < 6 * 23$

1) 4
2) 5
3) 3
4) 7

6 Թվային առանցքի վրա տրված են D(6) և C(13) կետերը: Ինչի՞ է հավասար DC հատվածի երկարությունը:

1)11
2) 7
3) 4
4)15

7 Ո՞րն է նվազման կարգով դասավորված շարքը:

1) 5տ, 210 կգ, 3g, 6000գ
2) 5տ, 3g, 210կգ, 6000գ
3) 6000գ, 210կգ, 3g, 5տ
4) 6000գ, 3g, 210կգ, 5տ

8 Արտահայտի՛ր 5 տ 6 g 4 կգ-ը կիլոգրամներով:

1) 564
2) 546
3) 5604
4) 5406

9 Քանի՞ ամիս է 6 տարի 9 ամիսը:

1)153
2) 69
3) 81
4) 609

10 Ո՞ր դատողությունն է սխալ:
1) Ցանկացած քառանիշ թիվ մեծ է ցանկացած եռանիշ թվից:
2) Ցանկացած միանիշ թիվ փոքր է ցանկացած երկնիշ թվից:
3) 0-ից տարբեր երկու հավասար թվերի քանորդը մեկ է:
4)Թվին մեկ գումարելով ստանում ենք նրա նախորդ թիվը:

11 Ո՞ր գծապատկերում է $\frac{1}{6}$ մասը ներկված:

1) 2) 3) 4)

12-18-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը գրի՛ր յուրաքանչյուր առաջադրանքից հետո նշված տեղում:

12 Հավասարակողմ եռանկյան պարագիծը 51 սմ է: Ինչի՞ է հավասար եռանկյան կողմի երկարությունը:

Պատ.՝_____

13 Եթե կոտորակի համարիչը փոքր է հայտարարից, ապա այդպիսի կոտորակը անվանում են_____կոտորակ:

14 b-ի ո՞ր արժեքի դեպքում $350 = b \cdot 10 + 150$ հավասարությունը կլինի ճիշտ:

Պատ.՝_____

15 142 և 357 թվերի գումարի կրկնապատիկը փոքրացրո՛ւ 498 –ով:

Պատ.՝_____

16 Հաշվի՛ր $(21 \cdot 500 - 4500) : 25$ արտահայտության արժեքը:

Պատ.՝_____

17 *Գծագիրը և խնդրի լուծումը ներկայացրո՛ւ առաջադրանքից հետո հատկացված տեղում:*
Ուղղանկյան երկարությունը 36 մմ է, որը 2 անգամ մեծ է լայնությունից: Ինչի՞ է հավասար ուղղանկյան մակերեսը:

18 *Խնդրի լուծման ամբողջ ընթացքը ներկայացրո՛ւ առաջադրանքից հետո հատկացված տեղում:*
Գիրքը տետրից թանկ է 6 անգամ: Արան մեկ գիրք և մեկ տետր գնելու համար վճարել է 1800 դրամ և ստացել 50 դրամ մանրադրամ: Որքա՞ն արժե գիրքը և որքա՞ն՝ տետրը:

ԱՆԴՐԱՆԻԿ-150

ԱՆՄԱՀ ԶՈՐԱՎԱՐԸ

«Եթե հայերս իրավունք ունենք մեր անցյալը հերոսական անվանելու, և եթե հարատևել ենք որպես ժողովուրդ առ այսօր, ապա այդ բանում մենք մեծագույն չափով պարտական ենք Անդրանիկին»:

Մարտիրոս Սարյան

Փետրվարի 25-ին լրանում է զորավար Անդրանիկի ծննդյան 150-ամյակը: Ազգովի նշում ենք ազգային հերոսի տարեդարձը: Հպարտ ենք, որ Անդրանիկի հայրենական կրծքում վառվող կրակը չմարեց, այլ ուժեղանալով տարավ հայ զինվորին Սարդարապատ, Բաշ-Ապարան, Բեռլին և Շուշի: «Անդրանիկը ժողովրդի խտացումն էր: Անդրանիկի մեջ պետք է տեսնել միշտ ժողովուրդը, անիկա հարազատ հայելին է մեր ժողովրդին»: Այսպես է գնահատել նրան գրող Վահան Թոթովենցը: Իսկ գրող Ավետիս Ահարոնյանը գրել է. «Անդրանիկը հայ ժողովրդի համար անհատ չէ, այլ մարմնացումն է մի հզոր ու անսասան գաղափարի, կուռք է Անդրանիկը, որ մեր ժողովուրդն է կռել, կոփել ու քանդակել՝ համապատասխան իր դարավոր իղձերի»: Պատմությունը ժողովրդի կենդանի հիշողությունն է: Անցյալի վկայակոչումը լոկ հարգանքի տուրք չէ անցած-գնացած սերունդներին ու նրանց մաքառումներին, և ոչ էլ հիացմունքի տուրք է նշանավոր գործիչներին ու նրանց արարումներին: Այդ անհատականությունները դառնում են ներշնչանք ու դաս հետագա ժամանակների համար՝ վերածվելով ազգային խորհրդանշանների:

Անդրանիկ Օզանյանը ծնվել է 1865թ. փետրվարի 25-ին Սեբաստիայի վիլայեթի Շապին- Գարահիսար բերդաքաղաքում: Հայրը՝ Թորոսը, հյուսն էր: 1875թ. Անդրանիկը ընդունվում է իր ծննդավայրի ազգային Մուշեղյան վարժարանը, որն ավարտում է յոթ տարի անց: Տասնյոթ տարեկան հասակում Անդրանիկն ամուսնանում է, ունենում երեխա, սակայն և՛ կինը, և՛ նորածինը մահանում են: Մի անգամ թուրք ոստիկանը մարմնական վնասներ է հասցնում Անդրանիկի հորը: Պատանի արհեստավորը դառնում է վրիժառու, սպանում է ոստիկանին, որի համար բանտարկվում է, սակայն բարեկամների ջանքերով ազատվում է և տեղափոխվում Կ.Պոլիս: 1891թ. Շապին-Գարահիսարում քահանա Նազարեթ Քիպարյանի տանը Անդրանիկն իր ընկերների հետ միասին սեղանին դրած Խաչի և Ավետարանի վրա երդվում են՝ միշտ հավատարիմ մնալ հայ ժողովրդին և նրա ազատագրական պայքարին: Կ.Պոլսում Անդրանիկն աշխատում է զենքի գործարանում, ուսումնասիրում զինագործությունը: 1892թ. նա մայրաքաղաքի ոստիկանապետին սպանում է և անցնում Ռումինիա: 1895թ. գալիս է Ռուսաստան, լինում է Արևելյան Հայաստանում, կազմում է 26 հոգուց բաղկացած զինված խումբ և նրանց հետ անցնում Թուրքահայաստան: Անդրանիկը միախառնվում է հերոսական պայքարին և որոշում միավորել իրարից անջատ գործող խմբերը: 1901թ. Մուշի շրջանում պաշտպանական մարտեր մղելով թուրքական զորքերի դեմ՝ Անդրանիկը որոշում է իր քաջերին կենտրոնացնել Առաքելոց վանքում: Նոյեմբերին նա 37 զինվորներով և Ցրոնք գյուղի 10 երիտասարդներով գաղտնի մտնում է վանք: Թուրքերը Սալեհ փաշայի հրամանատարությամբ հազարից ավելի զինվորներով հարձակվում են վանքի վրա: Մոտ մեկ ամիս հերոսաբար կռվելով թուրքական կանոնավոր զորքերի դեմ՝ Անդրանիկը որոշում է թողնել վանքը: Նոյեմբերի 27-ի գիշերը ուժեղ ձյան ու բուքի պայմաններում հայ քաջերը դուրս են գալիս շրջապատումից: Առաքելոց վանքի պաշտպանության հերոսամարտը Օսմանյան Թուրքիայի լծի դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարի փայլուն էջերից է: Անդրանիկի նոր սխրանքը 1904թ. հերոսամարտերի կազմակերպումն ու ղեկավարումն էր:

Հետո Անդրանիկն անցնում է Պարսկաստանոն: Հիասթափված խոշոր պետությունների դիվանագիտական խաղերից՝ նա ցանկանում է զենք հայթայթել և շարունակել ազատագրական մարտերը: Շրջագայում է Եվրոպայում, լինում է Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Բուլղարիայում: 1906թ. Ժնևում հրատարակվում է Անդրանիկի «Մարտական հրահանգներ, առաջարկներ, նկատողություններ և խորհուրդներ» գրքույկը, որտեղ պարզ ու մատչելի լեզվով ընդհանրացնում է պարտիզանական պայքարի ձևերն ու մեթոդները: 1907-14թթ. Անդրանիկն ապրում էր Վառնայից քիչ հեռու գտնվող Գալատիա գյուղում: Առաջին Բալկանյան պատերազմին ակտիվորեն մասնակցել է հայկական վաշտը, որի հրամանատարն էր Գարեգին Նժդեհը, ապա՝ Անդրանիկը: Ցուցաբերած քաջության և խիզախության համար Անդրանիկը 1913թ. Բուլղարիայի Ֆերդինանդ թագավորի հրամանով ստանում է Բուլղարիայի քաղաքացիություն և սպայի աստիճան, պարգևատրվում 4-րդ և 3-րդ աստիճանի արծաթե ու 2-րդ աստիճանի քաջության ոսկե խաչով:

1914թ. սկսվում է Առաջին աշխարհամարտը: Անդրանիկը Վառնայից գալիս է Թիֆլիս, մասնակցում հայ կամավորական գնդերի ստեղծմանը ռուսական բանակում: 1915թ. նա պարգևատրվում է քաջության Գեորգիևյան խաչով և սրով: Այդ սուրը կրողը առանց պաշտոնական արգելքների կարող էր ռուսական ցարի մոտ գնալ: Հայրենիքի համար դժվարին պահին՝ 1918թ. հունիս-հուլիսին, նա կանգնեցնում է թուրքական կանոնավոր զորքերի հարձակումը Շարուր-Նախիջևան-Խոյ գծով: Սակայն ուժերն անհավասար էին, և Անդրանիկը ամրանում է Զանգեզուրում: Նա ցանկանում էր մտնել Ղարաբաղ, սակայն անգլիացիների հրամանատարության ներկայացուցիչ Գիպոնսը նրան արգելում է և ստիպում վերադառնալ: 1919թ. Անդրանիկը զորացրում է իր զինակիցներին, զենքը հանձնում կաթողիկոսին և հեռանում Կ.Պոլիսով Փարիզ, Լոնդոն ու բնակություն հաստատում ԱՄՆ-ում: 1921թ. ամուսնանում է բուլղարահայ Նվարդ Քյուրքչյանի հետ և հաստատվում Ֆրեզնո քաղաքում:

Անդրանիկը վախճանվեց 1927թ. օգոստոսի 31-ին: Նրա վերջին խոսքերն էին. «Գործս կիսատ մնաց»:

1928թ. Անդրանիկի աճյունը թաղվեց Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանատանը: Ազգային հերոս Անդրանիկը չէր կարող մնալ օտար ափերում, և նրա աճյունը հավիտենական հանգրվան գտավ մայր հայրենիքում՝ Եռաբլուրում, ուր հանգչում են մեր նորօրյա գոյամարտի հերոս ֆիդայի-ազատամարտիկները: Համայն հայերի և Հայրենիքի կամքն էր դա, որ դարձավ իրականություն: Այդ օրերին լցված էին մեր բոլորի սրտերը, բոլորիս աչքերը թաց էին, հոգիները՝ փոթորկված: Խորին ակնածանքով, ափսոսանքով մենք մայր հողին հանձնեցինք ազգային արժանի հերոսին, հայ ժողովրդի լավագույն զավակներից մեկին: Անդրանիկը չկա այսօր, բայց կան, կլինեն և դեռ կգան նոր անդրանիկներ ու կշարունակեն նրա մեծ գործը և իրենց գեղեցիկ գործերով կզարդարեն մեր հաղթական երթը և խաղաղություն կբերեն Անդրանիկի անհանգիստ նշխարներին: Եռաբլուրից նա մեզ ոգեշնչում է հավատարիմ մնալ իր պատգամներին, իտալացի հեղափոխական Գարիբալդիի զինակից Ա.Չիպրանիի խոսքին. «Եվրոպայից որևէ բան չհուսաք: Նա ձեր դեմ է և այդ արդեն գործով է ցույց տվել, առաջին իսկ առիթի դեպքում դարձյալ այդպես կվարվի: Եվրոպական կառավարությունները, եթե երբևիցե ձեր պաշտպանությունը հանձն առնեն, որն անկարելի է, միևնույն է, ազատության միջոցով ստրկություն կբերեն ձեզ:

Ազատությունը կռվելով և արյունով կարելի է ձեռք բերել»:

Քո գործը շարունակվում է, շարունակվում հաղթական, անմահ Զորավար:

Լարիսա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոցի պատմության ուսուցչուհի

Հ.Գ. Անդրանիկի ծննդյան 150-ամյակի կապակցությամբ դպրոցում կազմակերպվեց ցերեկույթ:

ՕՀԱՆ ՊԱՊԸ

Օհան պապը սովորություն ուներ. քնելուց առաջ մտնում էր գոմը, ախոռի տակ թափված խոտը լցնում ախոռի մեջ, մի երկու բառ խոսում սպիտակ ձիու հետ և լապտերը ձեռքին դուրս էր գալիս գոմից, նայում երկնքին, խորը շունչ քաշում և մտնում տուն: Այդ սովորությունը ժառանգել էր հորից:

Տան դուռը տարօրինակ ճռռոց ուներ, որ նման էր տխուր մեղեդու, որի մեջ կարծես Օհան պապի տխուր կյանքի ելևէջները լինեին:

Խեղճ Օհան պապ: Կյանքի բոլոր դառնությունները կարծես այս մարդուն էին բաժին հասել: Հաճախ էր նա իր ճակատագիրն անիծում:

Ունեցավ տխուր մանկություն: Պատանեկությունն էլ ուրախ ու անհոգ չեղավ: Անժամանակ մահացավ հայրը՝ տան բոլոր հոգսերը թողնելով Օհանի վրա: Հենց այստեղից սկսվեցին նրա դառը և հոգսաշատ օրերը:

Չէր հիշում մի օր, որ կուշտ փորով անկողին մտներ: Հաճախ էր գողանում մոր պատրաստած չորաթանը, չնայած այն իր համար չէր: Բայց տուժողը ինքն էր: Ինչ արած, կյանքը այդպիսին է, պետք է համակերպվել:

Արցունքները խեղդում էին Օհան պապին, երբ հիշում էր անցած-գնացած այն օրերը, տխուր օրերը: Նա չէր ցանկանում ոչ ոքի տեսնել, ինչպես ինքն էր ասում, ուզում էր մենակ մնալ իր քաշած ու տառապած օրերի հետ: Չնայած իր ճաշակած դառը կյանքին՝ անսահման բարություն կար այդ մարդու սրտում: Նա միշտ բոլորի հանդեպ բարիէր: Գործից երբեք չէր հոգնում: Ամբողջ օրը հողի հետ էր աշխատում, վիշտ ու ցավը հողին պատմում և մի քիչ թեթևանում: Երեկոյան սպիտակ ձիու սանձը բռնած՝ վերադառնում էր տուն:

Ինչպես Մեծ լոռեցին կասեր՝ ծերունին լուռ չարչարանքով մի քանի կոճղ էր դնում կրակին, խորասուզվում էր մտքերի մեջ և սպասում, թե երբ Փառանձեմ տատը տաք թանապուրը կդնի սեղանին: Օհան պապը միևնուճար որդի ուներ՝ Վարդանը: Հաճախ էին ինքը և Փառանձեմ տատը վեճի բռնվում, թե երբ թոռ ունենան, ում անունն է կրելու:

Ավա՜ղ, այստեղ էլ ճակատագիրը իր դաժան խաղը խաղաց այս խեղճ ու կրակ մարդու հանդեպ: Այդպես էլ թոռ չտեսան: Չհասցրեց ամուսնանալ Վարդանը: Արցախյան պատերազմը իր սև բիծը թողեց այս խեղճ ընտանիքի վրա: Օհան պապը մեծ հույսեր ուներ կապած Վարդանի հետ: Ինչպես ինքն էր ասում՝ սրտինը սրտումը մնաց: Անկատար մնաց Օհան պապի մուրազը:

Վարդանը լայն թիկունքով, գանգուր մազերով երիտասարդ էր. իզուր չէր կրում Վարդանի անունը, քանզի նրա երակներով հոսում էր քաջ Վարդանի արյունը: Եվ տոգորված էր Վարդանի քաջությամբ:

Այն օրը, երբ որդին հերթական անգամ դիրքեր պիտի գնար, Օհան պապը երազ տեսավ, չարագուշակ երազ:

Նա տեսավ, թե ինչպես Վարդանը՝զինվորական պայուսակը, ուսին մի գետակով կանցներ: Երբ նա մոտեցավ գետակին և պատրաստվում էր անցնել, կոշիկի մեկը տիղմի մեջ խրվեց, իսկ գետակի ջուրը ջրի նման չէր, այլ արյան գույն ուներ: Իսկ որդին այլևս չերևաց:

Օհան պապը արթնացավ քնից, սառը քրտինք պատեց նրա ճակատը: Վախ մտավ նրա սիրտը: Վատ երազը նրան հանգիստ չէր տալիս: Քիչ հետո լուսաբացի շողերը պատուհանից կամաց-կամաց ընկան տան մեջ:

Չարագուշակ երազի մասին նա ոչինչ չասաց Փառանձեմ տատին: Առանց այն էլ Փառանձեմ տատը շատ էր մտահոգված և անհանգստանում էր միևնուճար որդու համար: Հայրենի հողը վտանգի մեջ էր, որդին մասնակցում էր Գոյապայքարին: Մանավանդ որ հողն Արցախի Վարդանի և նրա նմանների կարիք շատ ուներ և հիմա էլ ունի:

Հազիվ էր զսպում արցունքները Օհան պապը, բայց ինչ արած, ինչպես միշտ, պետք է ճամփա դներ որդուն և բարին մաղթեր նրան:

Խնդրում էր Աստծուն՝ պահպանել որդուն, նա իր տան միակ ճրագն էր: Ճամփա դրեց որդուն, երկար նայեց որդու ետևից:

Օհան պապի մտքից չէր անցնում չարագուշակ երազը: Վարդանն էլ երկար նայեց հոր և մոր կողմը ու ասաց.«Լավ մնացեք»: Վարդանի վերջին խոսքերն էին: Վարդանը վերջին անգամ գնաց տնից: Եկավ, բայց՝ արդեն լուռ ու անխոս:

Եվս մի անգամ ալեկոծվեց խեղճ Օհան պապի սիրտը: Վշտին չդիմացավ Փառանձեմ տատը: Չանցած քառասուն օր՝ նա հրաժեշտ տվեց կյանքին՝ թողնելով Օհան պապին մենակ իր դարդի, իր ցավի հետ:

Անցավ մի քանի տարի: Մահացավ նաև Օհան պապը՝ իր հետ տանելով իր կյանքի վատ օրերը, իր դարդն ու ցավը:

Բազում մարդիկ հողին հանձնվեցին՝ մուրազները սրտներում, ինչպես Օհան պապը:

Թող Արցախ աշխարհում հավերժ խաղաղություն լինի, և յուրաքանչյուր արցախցի իր հողում ապրի ուրախ ու երջանիկ, իր հողին կառչի խոր արմատներով:

Լուսինե ՍԱՂՅԱՆ
Մուշկապատի Բ.Ուլուբաբյանի անվան միջնակարգ դպրոցի քիմ-կենսաբանության ուսուցչուհի

ՇԻՐԱԶ-100

ԵՂԵՌՆԱՊՈՒՐԾ ԱԶԳԻ ԱՄԵՆԱՊԱՌՆԱՍՎԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Նստած նայում եմ կարոտով՝ խորհրդավոր Մասիսին,
Իմ պապերի պապերի սար, իմ վիրավոր Մասիսին,
Միտք եմ անում, թե պապերիս ինչ պատասխան պիտի տամ,
Երբ որ զարթնեն՝ գերի տեսնեն կալանավոր Մասիսին:

Հայոց ազգային հանճարը ծնեց մի բանաստեղծի, որ պիտի դառնար ժողովրդի վերքերի, հայրենահառաչ ցավերի, ազգային վերածննդի հայրենաշունչ երգերի ու ներբողների մեծագույն արտահայտիչ: Եվ ծնվեց նա՝ հայրենիքի դաժան օրհասի ծով վերքերը համայն հայության սրտին հասցնելու, հայության հիշողությունը հավիտյանս թարմ պահելու... Եվ նրա ծննդյան վկայականը վավերացվեց ահարկու 1915 թվականի ապրիլի 26-ին, որի մասին վկայում է բանաստեղծի խոստովանանքը. «Ես ծնվել եմ ձորերում՝ Եղեռնի սև օրերում». Եղեռնի մոխիրներից ծնված մեծ բանաստեղծը գրական անդաստանում մկրտվեց ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ անունով: Նրա քնարը հնչեց հզոր շնչով, որից թափ առավ ժողովրդական հուժկու տարերքը:

Հովհաննես Շիրազը մուտք գործեց գրական աշխարհ թարմ գույներով, մեծ շռինդով ու հախուռն հևքով՝ արժանանալով հայության թագակիր բանաստեղծի տիտղոսին...: Իր մեջ կրելով ժողովրդական տարերքի ողջ ուժգնությունը՝ բանաստեղծը, փարվելով իր ակունքներին, վեր հանեց ժողովրդի հոգևոր գանձերը. բացելով իր ներաշխարհը՝ բանաստեղծը բացում էր մարդկության չպեղված գաղտնարանները:

Մուտք գործելով գրական աշխարհ՝ Շիրազ բանաստեղծն իր շուրջը փռեց ծով ծաղիկներ, զմայլագեղ աստղաբույլեր, թեժ արեգակ, բնության զարմանալիորեն շքեղ ու գողտրիկ պատկերներ... Արշալույսների ծիրանիով շուրջառված՝ բանաստեղծը հրովարտակեց գարնան ու ծաղկունքի, մարդու ցնծության ու նրա հավերժի բախտի իր ուղերձը՝ հաղորդակցելով մեզ և արարչության բիբլիական խորախորհուրդ գաղտնիքներին: Արձագանքեց բնության ձայնին՝ թափանցելով արարչական ոլորտներ, ամենուր պեղելով բնության և մարդկության Արարչին, որին որոնեց ողջ տիեզերքում՝ հայտնաբերելով մարդկային ուժի գաղտնիքները և ամենազոր ցավին ու մահին հաղթելու մարդկության հանճարը: Վերջապես գտավ արարչական հանգրվանը՝ մարդկային հոգին:

Շիրազ բանաստեղծը հյուսեց բնության քնարերգությունը շքեղ ու հոգեբուխ երգերով, որոնք փառաբանում են հայրենիքի լավն ու բարին. «Իմ լավն ու բարին իմ հողն է անեղծ, Իմ Հայաստանն է իմ լավն ու բարին»:

Բանաստեղծը կանթեղեց իր հոգեհույզ երգերը ազգային երազանքի մեծ իղձով, որ ողջ ազգին ամուր զրահեն և բյուր դարերով հային հայ պահեն, քանզի մեր բախտի աստղը երկար դարեր կորել էր մթնում, ու... ազգն էր ցրվել աշխարհով մեկ, իսկ բանաստեղծի բուրյան լեզուն տենչանք ուներ՝ հայոց ազգը տուն բերել: Բանաստեղծը արթնության կոչ է անում ողջ աշխարհով սփռված հայությանը՝ անաղարտ պահել հայոց լեզուն. «Ով լքում է իր հայ լեզուն՝ նա իր ազգի մահն է ուզում», իսկ ծով կարոտը կորուսյալ հայրենիքից առնելու համար դիմում է թռչող հավքերին, որ անցնեն խլված հայոց հողերով, ծունկի իջնեն, համբուրեն հողն հայրենազուն:

Հայրենի երազանքն իրագործելու համար բանաստեղծը պատրաստ է կամրջել իրեն՝ դառնալով փրկության ելարան իր ժողովրդին. «Ազգ իմ, ոտքդ դիր վրաս, Անցիր, փրկիր հողդ պերճ»:

Գոյության կռվի հավիտենական քաոսում հզոր է հնչում բանաստեզծի ձայնը՝ լինի ազգային ողբ, թե փառաբանում: Ինքը հայրենիքի սոխակն է, երբ խաղաղ է ամեն ինչ, ահեղամռունչ առյուծը, հզոր լեռն է, երբ խուժում է վայրագ թշնամին՝ անմահության կնիքով պատսպարելով հայրենիքը օրհասից. «Թե տիեզերքի սիրտն էլ դադարի, Դարձյալ մահ չի գա իմ հայրենիքին»:

Հզոր է մանավանդ բանաստեղծի իղձը. «Բերանս բանա՝ իղձս կբացվի, Մասիսով պիտի իմ ազգը լցվի», և բաղձանքը՝ «Ախ, երբ պիտի ազգահավաքն հային դարձնի հայրենահայ, Որ աստղացիր ողջ հայերին խմբե, դարձնի արևահայ», այնուհետև՝ «Երբ պիտի Քուռկիկ Ջալալիդ, ազգ իմ, ժայռից դուրս քաշես, Որ զոհվեմ հողիդ՝ Մասիսն ազատեմ՝ սիրտս հովանա...», և՝ «Ինձ հոգեհանգիստ կատարեք միայն Մասիսի վրա»:

Բանաստեղծի խոհափիլիսոփայական քնարում ուժգնանում են հողի ու խղճի, մարդու և տիեզերքի հանդեպ ունեցած խորազնին մտորումները, իսկ մոր մասին խորհելիս աներկբա ասում է. «Դատակնիքն եմ մայրուրաց մեղքի»՝ գլուխ խոնարհելով լոկ մոր առաջ:

Բանաստեղծը սրնգերգեց հայոց վիշտն ու նրան բալասանող հայոց երգերը և վարդեր բացող Արարատ սարի գովքը. «Հայոց երգերը՝ ամրոց երգերը, բալասանում են հայոց վերքերը, Մասիս կհանվեն իմ բոց վերքերը, Հայոց երգերը՝ թագն Արարատին»:

Որո՞նք են հայոց վերքերը, որոնք անդադրում նորոգում են հայոց վշտերը. 20-րդ դարասկիզբը արյունոտ եղավ հայի համար. թուրք բարբարոսի կեռ յաթաղանից ընկան բյուր-բյուր հայերը. հայերից ամայացավ Արևմտյան Հայաստանը: Շիրազը, որ դեռ մանկուց կրեց Եղեռնի հարվածները, ճաշակեց որբության դառնությունները, երբ տակավին 5 տարեկան էր, երբ թուրք ասկյարների կողմից սպանվեց ընտանիքի թև-թիկունք աշխատավոր հայրը: Ու նա դարձավ եղեռնազարկ ժողովրդի վշտակեղեք բանաստեղծը:

Շիրազը հայրամռունչ ցասումով բացեց հայոց ազգի դանթեական-դժոխային քստմնելի պատկերների դուռը՝ իր ժողովրդի կսկիծը թափելով մարդկության խղճի առջև... Սկսվեցին Հայոց դանթեականի ահազարհուր, սարսռազդու գիշերները, և բանաստեղծը դժոխային պատրանքների հեղինակին՝ մեծն Դանթեին, տարավ մոխրացած հայոց բնակավայրերով՝ ցույց տալով, թե որն է իրական դժոխքը: Առաջնորդելով իտալացի մեծ բանաստեղծին թուրք-օսման-բարբարոսի ավերած հայոց տարածքներով՝ Շիրազը տալիս է մեր մեծ ողբերգության ողջ քստմնելիությունը, որը գենոցիդ-եղեռնի, նախճիր-կոտորածի դժոխքն է իրական, հինավուրց քաղաքակիրթ ժողովրդի ցեղասպանությունը:

Սա Արդահանի, Բիթլիսի, Խլաթի, Կարսի, Տարոնի, Զեյթունի,Կարինի, Այնթապի, Բասենի, Մոկսի, Մարաշի, Շատախի, Անիի, Վանի, Սասունի, Էրզրումի, Պոլսի... մոխրափլված բյուր հազար հայոց բնակավայրերի պապենական օջախների կործանման դժնազարհուր ցեղասպանությունն է:

Թուրք ցեղասպանների պարագլուխների՝ Էնվերի, Թալեաթի, Նազըմի ստորագրությամբ տրվեց հայերի բնաջնջման հրամանը; Դժոխադուռ գիշերները վայում էին կործանված Արևմտյան Հայաստանի վրա, իսկ խաղաղության թռչունը դեռ նոր պիտի թխսի նստեր... «Որտե՞ղ եք, անթիվ իմ հա՛յ բալիկներ, Ա՛խ, բնում մորթված հայոց գալիքներ»: Եվ հայոց բոլոր ճամփաներին արնաքամ հույսն էր հատնում, և հայոց դիատար գետերն էին հորդանում. Հայոց արյունը ծով էին տանում...

Բանաստեղծը գրեց իր Եղեռնամատյանը, որ մարդկության դատին հանձնված հայոց անմեղ ազգի դատաստանագիրքն է, որ նվիրված է հայ կոտորածների հավերժասուգին...

Եվ հույսի թոշնած աշունս բերող բարուկակներով
Դեռ անցնում էինք նոր տեսիլների պարուկակներով,
Երբ մի աստղաբույլ գլուխը ծռեց երկնքից ի վար.
Ներս նայեց՝ դառած ոգին բազմամբոխ իմ հայ զոհերի,
Տեսավ՝ Նարեկա տաճարում ածուխն իր մարմինների
Այնքան խիտ էին, որ վառվելով էլ կանգնած մնացել՝
Ածխացել էին, բայց իրար սեղմված՝՝վեմ էին դարձել,
Վար չէին թափվել մեր մարմնավորված անեծքի նման...

Ճիշտ երկու հազար գյուղ ու քաղաք է անհետ կործանվել՝
Յոթն հարյուր հազար անմեղ հայեր են կախաղան հանվել,
Փլվել հինգ հարյուր վանքեր ու տաճար ու եկեղեցի,
Երեք հարյուր վանք՝ մզկիթ է դարձվել,-դե՜, եկ՝դիմացիր՝,-
Ուր շղթայվել են չորս հարյուր հազար հայեր շղթայված,
Վանա մայր ծովում, Եփրատի մովում, Տիգրիսում այս ծով,
Այրվել են այսպես տաճարների մեջ, բայց չեն թուրքացել,
Ավարայրասուրբ Վարդանի նման հայ են մնացել...

Այսպիսի դժոխալուր պատկերների ականատես դարձնելով Դանթեին՝ հարցում է անում նրան, որի պատասխանն էլ ակնհայտ է՝ «Քո միֆ դժոխքում վանքեր կան վառվող, Մանուկներ կային աչքերով... հանվող»:

-Կարդացեք, մարդի՜կ, ահեղամատյանը և լուռ խորհեցեք, թե ինչու 100 տարի հետո էլ հայության դատը դեռ չի ճանաչվել՝ «Եվ հայ չթողին հայարմատ հողում, Եվ դեռ անպատիժ ոսոխն է բերկրում...», «Կես Հայաստանը ուղեղը հանված գանգի նմանվեց...», «Սգա՜, Հայաստա՜ն,... նահատակներիդ աստեղնահամար», հազար-հազար հայ... մեկուկես միլիոն դիակներ դարձան՝ «մորթված, խեղդված, կիզված, շամփրված, կախված, գիշատված...»: Անիծյալ ճակատագիրը «զարհուրաբիբ աչքերը թարթում, հոգեհանգիստ էր զոհերին կարդում, Դանթեադժոխք մեր ողջ ճամփեքին Ասես շիրիմ էր դնում ողջ ազգին», «Թուրքը հայ արնից ձեռքերը հանում, Աստծո արցունքի մեջ էր լվանում...»:

Այսօր այդ նույն՝ ոճիրի պատյանի մեջ քողարկված թուրքը քաղաքակրթություն է խաղում Եվրոպայի և աշխարհի աչքի առաջ՝ «մոռանալով իր արյունոտ մորթին ու հովազի հոգին». դեռ արյան չորացած հետքերը իր ձեռքերից ամբողջովին չմաքրած՝ անդամագրվել է փորձում քաղաքակրթված Եվրոպայի միության դաշինքին, բայց տեսնելով, որ չի հաջողում, խարդախորեն ինչ-ինչ ճակատամարտի՝ Գալիպոլիի հոբելյան է մոգոնում Մեծ Եղեռնի 100-ամյակի նախօրեին՝ հայոց պահանջատիրության հարցը աշխարհի առջև թերևս նսեմացնելու հույսով... Սակայն՝ «Հատուցումը եղեռնի՝ Երբ էլ լինի՝ կհառնի».

Եվ Մասիսը՝մարդկության փրկության խարիսխն էլ մնացել է թուրքին գերի այս էլ 100 տարի. օրհնության լեռը շղթայված է, և ահա մեկ դար «հագել է մամուռ, Ողջ Արևմտյան Հայաստանս լուռ»:

Բանաստեղծն ընդվզում է մարդկության խղճի առաջ, թե թուրք «մարդաոհմակների» ոճրագործությունը երբ պիտի դատապարտվի.

Ազգե՜ր, թե հայոց այս եղեռնը մեծ
Ձեր մեկն ու մեկին խոշտանգեր հանկարծ՝
Իմ սիրտը, որպես հայոց բանաստեղծ՝
Չէր լռի ձեզ պես, պիտի մռնչեր այսպես ահագնած...

Ինչքան մեծ է բանաստեղծի ցասումը, այնքան անմար է նաև հայության ճակատագրի հանդեպ նրա մեծ հույսը. «Մահը մերժողը երբեք չի մեռնի, Այս դժոխքից էլ հայը կհառնի»: Եղեռնի ցավը վերապրող ժողովուրդը ինչպես կարող է իր ահեղ պատմության մի հյուլեն իսկ մոռանալ, և՝ «Ազգ իմ տրոհյալ, ո՜վ դու վերապրող ազգ իմ վշտակեզ, Օ՜հ, միթե պիտի եղեռնածովը մտքիցդ հանես»:

Հայության ծովացած վիշտը 1965թ.-ին ծնունդ տվեց եղեռնազոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշակոթողի կերտմանը, և ամեն տարվա ապրիլը դառնում է հայության ողբերգության հիշատակի երթ: Իսկ այն ժամանակ Շիրազին արգելում էին անգամ այդ սև օրվա սև տարեթվի եղեռնազոհերի անունն էլ հիշել, իսկ ինքը՝ բանաստեղծը, վիրավոր հոգով խոլ մռնչում էր. «Միթե չպիտի ամեն ապրիլի քսան և չորսին, Մռնչանք հայոց մեծ դատի մասին, Այլապես Աստված էլ կթքե հայոց ազգի անցյալի առյուծաքաշին»:

... Կասեցվեց թուրքերի առաջխաղացումը հայ հերոսների անձնուրաց պայքարով: Հայ ֆիդայապետները անվեհեր գրոհով ու պայքարով հարվածում էին թուրք-ասկյարներին. վկան՝ Անդրանիկ զորավարի և մյուս հայդուկապետների գրոհները. «Ազգիս օրհասի դժոխաժամին, երբ մոլեգնում էր ցեղասպան քամին, Քաջ Անդրանիկի զորքը հարձակվեց», «Հայ վրեժն էր թուրքին ջնջում», «Անդրանիկվեց հայոց զորքը..., Հանեց վրեժն հայ ցասումի, Վրեժն անթիվ նահատակաց»:

Ժողովրդի ոգու կրող բանաստեղծը վառ հավատով տեսնում է վաղվա Միացյալ Հայաստանի հուսալի օրը.

Յոթը դար էլ բանտում մնա՝
Չէ՜, կազատվեն հողերն հայկյան:
Հավատում եմ իմ հավատին՝
Արքա կօծվեմ Արարատին:

Հայոց քաջազունների սուրը թրատեց թուրքերի առաջխաղացումը, և Սարդարապատի ճակատամարտով գծվեց հայության սահմանը: Եվ վերածնունդ ապրող հայոց աշխարհին հուսադրում է Մասիսը, որ մի օր ինքն էլ տուն կդառնա՝ դառնալով հայության հույսի բանալին. «Մասիսը՝ որպես Աստծո վառած երկնահաս մի մոմ՝ Տեսանք վառվում է կերոնի նման հեռված մայր հողին, Որ չկորցնի հայ ազգն այս մթնում յուր մայրաուղին»:

Առժամանակյա խաղաղությունը վերածնեց Մայր Հայաստանին. նա բարգավաճեց, ստեղծեց իր կայուն տնտեսությունը: Շեն էին իր դաշտերը, փթթում էին հայոց այգիները, բայց մնում էր դեռ հին մրմուռը, ու նոր վերքերն էին իր սիրտը կիզում. Նախիջևանը մեր ձեռքից խլեց ախոյան ազերին՝ քիչ էր, դեռ աչք էր տնկել Արցախ-Ղարաբաղի վրա: «Ղարաբաղի ողբը» ողջ հայության ողբն էր, որ մնացել էր պատանդ ազերի թուրքի ձեռին: Ու հայության միաձույլ պայքարով Արցախի կապանքը քանդվեց, և այն դարձավ հայկական երկրորդ հանրապետություն: Այնքա՛ն կարևոր է այժմ խաղաղությունը, որ խաղաղ այգաբացի օրրան է բացել հայության համար, չնայած ազերին տակավին մերթընդմերթ խաթարում է մեր բազմաչարչար անդորրը:

Շիրազը լավ գիտեր խաղաղության գինը և մաղթելով խաղաղություն ամենեցուն ու կարևորելով աներկբա հաշտ ու խաղաղ ապրելու անհրաժեշտությունը՝ դեռ մեծ Գոյապայքարից առաջ կատարում էր եզակի ընդհանրացումներ. «օրորոցվող հողագնդին խաղաղության համամարդկային խոհն է հուզում, որ չլինեն որդեկորույս հուշեր աշխարհաչափ կյանքի համար. Ամեն մի ծիլ կյանքի սյուն է, և ամեն մի օրորոց՝ կյանքի մի ամրոց՝ մշտապտույտ հողագնդի ջաղացքարն է վիթխարի...»:

Բանաստեղծն իր տողերում մարդկությանը խաղաղ կյանքի է կոչում. «Բավ է սրի փայլով հարբեք, Սուրը սեր չի բերի երբեք»: Խաղաղությունը խիստ անհրաժեշտ է, որ էլ չհնչեն ողբեր. «Իմ հող, քեզ եմ պահ տալիս ոսկե քրտինքն իմ նշխար, Պապերիս հող, լավ պահիր իմ խաչն ու քեզ, իմ աշխարհ...»:

Եվ ընդմիշտ հայոց Պառնասի աստղաբույլի մեջ ցոլանում է մի պայծառ աստղ՝ հույս ու լույս տալով ժողովրդի սրտին: Հայի ամենացված ու սիրելի աստղն է դա, որ համբարձվել է երկինք՝ դառնալով շողարձակում լուսաճաճանչ: Մերթ ցոլանում է այն ամենապայծառ լույսով՝ խանդավառելով իր ժողովրդին, մերթ ծածկվում ամպածրար մշուշներում՝ ընկղմվելով խոր վշտերի մեջ:

Բայց երբ կրկին առկայծում է, ժողովրդի հոգին հուսավառվում է, երբ տեսնում է իր «սրբության մերան» ազգի Աստղին: Ու նրա անունը ծովածավալ տարածվում է հայոց օջախներում՝ երդեերդ, շուրթեշուրթ՝ Հովհաննես Շիրազ՝ հայոց վշտի, հայոց հույսի մեծ բանաստեղծ, որ հարյուր անգամ խոցված հայրենիքի խորագույն վիշտը երգելու եկավ հազարապատիկ խոցված սրտով...

Այն, ինչ երկնել է Արարատի գահի արքա Շիրազը, անպարագծելի է: Նրա յուրաքանչյուր տողը մի գյուտ է, մտքի խոյանք ու ընդվզում...

Այս հարյուրամյակից հետո հարյուր դար էլ անցնի, Շիրազի համամարդկային ինքներգությունը չի կրկնվի, քանզի մտքի այսպիսի խոյանք տրվում է ազգին 1 անգամ, ուր հայոց վշտից անդին ուրիշ պոռթկում չկա, չկա մի այլ Մասիս՝ հայոց ցավին գերի, և չկա մի այլ բանաստեղծ, որի ազգախորհուրդ պատգամները «Արարատով են չափում մեր նոր օրը գալիք»:

Վարդիթեր ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՒՇԵՐ

«ԵՍ ԼՍԵԼ ԵՄ ՆՐԱ ՄԵԾ ՍՐՏԻ ՏՐՈՓՅՈՒՆԸ»



Ամիսներ առաջ գործուղված լինելով Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղ, հանդիպեցի Ռոմա Աղաբեկյանին, ով երկար տարիներ մտերմական կապեր է ունեցել Հովհաննես Շիրազի հետ: Ռոմա Աղաբեկյանը եղել է գյուղի դպրոցի գերմաներենի ուսուցիչը, ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին գումարման պատգամավոր, այժմ թոշակառու է: Նրա հուշերը, կարծում ենք, կհետաքրքրեն շատերին, հատկապես՝ Շիրազի երկրպագուներին: Եվ թող այս հուշապատումը Արցախի երախտագետ ժողովրդի կողմից նաև լինի յուրատեսակ նվեր մեծ բանաստեղծի 100-ամյակին:

Պատմում է Ռոմա ԱՂԱԲԵԿՅԱՆԸ:

-1963թ. ընդունվեցի Երևանի Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտը: Այն նոր էր անջատվել պետական համալսարանից և գործում էր ինքնուրույն ինստիտուտի կարգավիճակով: Նրա առաջին շրջանավարտներից եմ: Արտաշատցի ընկերոջս հետ վարձով տուն էինք փնտրում: Տրաֆարետը ձեռքներիս, որի վրա գրված էր՝ «Փնտրում ենք վարձով տուն», ման էինք գալիս Լենինի հրապարակում: Աղվան անունով մի մարդ առաջարկեց իր տունը, որը գտնվում էր «Արարատ» սրճարանի մոտ: Մեր իրերը բերեցինք դասավորեցինք, այնուհետև դուրս եկանք մի քիչ օդափոխվելու: Ման էինք գալիս, մեկ էլ ընկերս թե՝ Շիրազն է: Նա սրճարանի պատուհանի մոտ եռանդուն զրուցում էր երկու մարդու հետ: Հետաքրքրության համար անցանք մոտիկ մայթը, որ գոնե նրանց զրույցից բառեր լսենք: Կցկտուր խոսքեր էինք լսում: Զրույցը, պարզվեց, Տիգրան Մեծի մասին էր: Պատմում էր, որ Տիգրանն այնքան ուժեղ է եղել, որ երբ նրան շղթայակապ են արել, ասել է. «Հեռո՛ւ մնացեք, կթքեմ՝ կմեռնեք»: Եվ վախից հեռացել են:

Զրուցակիցներից մեկը հետաքրքրվեց, թե ինչպիսի արտաքին ուներ Տիգրանը: Շիրազը թե՝ բոյ-բուսաթով, շիկամորուս, ու հենց այդ խոսքի վրա էլ շրջվեց դեպի մեր կողմը: Հետո զրուցակիցներին թողնելով՝ անսպասելիորեն մոտեցավ, մտավ թևս և ասաց. «Այ, սրա նման»: Ես նույնպես բարձրահասակ էի, մարզական կեցվածքով, շիկավուն ու խաժակն: Անակնկալի եկած հիպնոսացել էի:

Հետո հարցրեց, թե ով եմ, որտեղացի: Երբ ասացի՝ ղարաբաղցի եմ, ուրախացավ, հեռախոսի համարը, հասցեն տվեց և ասաց, որ կարող եմ ուզածս ժամանակ անցնել, ցանկացած հարցով դիմել:

Բայց ես ամաչում էի նրան զանգել: Մեկ ամիս անց ընկերս ասաց. «Զանգի՛ր, գնանք անտիպ գործեր վերցնենք»: Զանգեցի: Արտակարգ հիշողություն ուներ, անմիջապես հիշեց ինձ: «Ինչո՞ւ ես լռել,- ասաց,- ինչու՞ չես երևում»:

Շիրազի գործերը շատ չէին տպագրում, անտիպները սրա-նրա ձեռքից վերցնում էինք, կարդում: Գնացի: Արտակարգ պարզ մարդ էր, կարողանում էր դիմացինին մինչև վերջ լսել ու պատասխանել: Խնդրեցի նրա անտիպ գործերը: Տերյան փողոցի վրա տպարան կար, որտեղ Ռիմա (թե՞ Ռիտա, լավ չեմ հիշում) անունով մի աղջիկ էր աշխատում. նա էր մեքենագրում Շիրազի բանաստեղծությունները: Զանգեց նրան, ու գնացի վերցրի բանաստեղծությունները: Ընդ որում, երեք օրինակից վերցրի, որի առաջին և երրորդ օրինակները տարա Շիրազի համար, իսկ երկրորդ օրինակը ինձ համար պահեցի:

Նրանց տունը գտնվում էր Ամիրյան և Մաշտոց փողոցների անկյունում: Հետը միայն մայրն էր ապրում. փոքր, կուչ եկած կին էր: Ծանոթացրեց մոր հետ: Մայրն էլ, պարզվեց, շատ էր սիրում ղարաբաղցիներին: Համեստ պայմաններում էին ապրում: Սուտ է, որ շատերը (նկատի ունեմ՝ դիրք ունեցող մարդիկ) գրում էին, թե Շիրազի հետ մտերիմ են, սիրում են նրան: Մեծ բանաստեղծի մտերիմներից էին կինեմատոգրաֆիայի տնօրեն Գևորգ Հայրյանը և Բրյուսովի անվան ինստիտուտի ռեկտոր Մնացական (Մացո) Նահապետյանը, ով կազմել է Ռաֆֆու հատորները: Վերջինս խենթի պես էր սիրում Ղարաբաղը, եղել է Արցախի բոլոր գյուղերում:

1964թ. պատրաստ էր և պետք է հրատարակվեր «Քնար Հայաստանի»-ի երկրորդ հատորը, սակայն գրողները հրաժարվում էին առաջաբան գրել: Միայն հիշյալ երկուսը համաձայնվեցին: Պայմանավորվեցին, որ Գևորգ Հայրյանը պիտի գրի:

Երբ իմացա, որ գիրքը տպագրվել է, Երևանի բոլոր գրախանութները ման եկա, չգտա. արագորեն սպառվել էր: Ճարահատյալ գնացի Շիրազի մոտ: Հենց «Արմենիա» հյուրանոցի մոտ հանդիպեցի նրան. դեպի հրապարակ էր գալիս: Խնդրեցի գիրքը: Միասին եկանք հրապարակի գրախանութը: Գրադարակների վրա զորքի նման շարված էին ուրիշ գրքեր: Նայեց, մի քիչ կորացավ, մատը մեկնեց դեպի այդ գրքերը, ու թե՝ «Թող էտենց էլ փտեն. որ չեն առնում, ինչո՞ւ եք տպագրում»: Գրավաճառին ասաց՝ ղարաբաղցի բարեկամիս համար մի հատ գիրք ճարիր: Գրավաճառն ասաց, որ ոչ մի օրինակ չի մնացել: Դուրս եկանք: Շիրազի հետ թևանցուկ՝ եկանք նրա տուն: Դուռը բացեց, ուղեկցեց ճաշասենյակ (սովորաբար գնում էինք աշխատասենյակ): Մայրը, ինձ տեսնելով, ուրախացած հարցուփորձ արեց Ղարաբաղից: Սեղանի վրայի սպիտակ սփռոցը փքված էր: Պարզվեց՝ տակին քառորդ մասը կտրած ձմերուկ կար, կողքին՝ թխվածք: Մայրը ստիպեց, որ ուտեմ: Շիրազը մտել էր աշխատասենյակ: Ամաչում էի, հրաժարվեցի: Մեկ էլ տեսա՝ Շիրազը եկավ առյուծաբաշ, ուղղակի հարձակվեց վրաս. «Տո՛ լսիր, Աստծուն կմերժե՞ն, մայրն աստված է»,- ասաց: Վախից մի կտոր վերցրի:

Հետո տարավ աշխատասենյակ: Գիրքը նվիրեց, մակագրված էր. «Ղարաբաղը մորս կանչն է, ինձ է կանչում հույսով տրտում, Ղարաբաղը իմ կակաչն է, կարմիր, բայց սև ունի սրտում»: Այնուհետև ավելացրել էր. «Իմ սիրելի ղարաբաղցի-արցախցի Ռոմա Աղաբեկյանին»: Երբ գիրքը վերցրած ուրախ-ուրախ իջնում էի աստիճաններով, հետևիցս գոռաց. «Է՜յ, էդ ո՞ւր, էդ ո՞ւր»: Մտածեցի՝ կարո՞ղ է՝ փոշմանել է»: Ետ դարձա: Թևիցս բռնած՝ տարավ աշխատասենյակ: Գիրքը ձեռքիցս վերցրեց, նստեց աթոռին, մի թուղթ վերցրեց և արտագրեց գրքի քառատողը՝ ասելով. «Ազիզ ջան, միայն քեզ համա՞ր եմ գրել, որ տանում ես»: Ու գիրքը նորից ինձ տվեց:

Որոշ ժամանակ անց Շիրազին հրավիրեցի Ղարաբաղ: Ասաց. «Ռոմա ջան, լավ կլինի, որ պաշտոնական կանչ լինի, ինքնակոչ չստացվի»:

Մեր ռեկտորը երբ իմացավ, որ նման գործ եմ նախաձեռնել, կանչեց իր աշխատասենյակ, շնորհակալություն հայտնեց և ասաց. «Մեքենաս քեզ եմ տրամադրում, Շիրազին տար Ղարաբաղ»:

Պաշտոնական հրավերի համար եկա Ստեփանակերտ՝ հույս ունենալով, որ Աբգար Դանիելյանը (տատիս եղբոր տղան է, «Սովետական Ղարաբաղ» թերթի կուսկազմակերպության քարտուղարը) կաջակցի ինձ: Նա զարմացավ, կանչեց Բոգան Զանյանին՝ հետը խորհրդակցելու: Հրաժարվեցին: Ինձ հետ տարել էի Շիրազի անտիպներից, խնդրեցի գոնե դրանցից մի շարք տպագրել: Չէի հասկանում, որ նրանց ուժերից վեր բան էի խնդրում:

Դառնացած վերադարձա Երևան, ամեն ինչ պատմեցի Շիրազին: Նա տոն չտվեց, սկսեց մանրամասն հարցուփորձ անել Ղարաբաղից՝ ինչպե՞ս է վիճակը, տնտեսությունը և այլն:

Անցավ մեկուկես ամիս: Զանգեցի Շիրազին: Ասաց, որ գնամ տպարան: Ռիմայի (թե՞ Ռիտայի) մոտ տեսա «Ղարաբաղի ողբը»՝ մեքենագրած: Այն սկսվում էր ինձ մակագրած գրքի քառատողով: «Ղարաբաղի ողբը» ահա այսպիսի հետաքրքիր նախապատմություն ունի:

Մի անգամ հարցրի՝ տեսե՞լ է Չարենցին: Բարձրանում էինք ներկայիս Մաշտոցի պողոտայով: Շահումյանի անվան դպրոցի մոտով անցնելիս դիմացի շենքը ցույց տվեց. «Այ, էնտեղ էր ապրում Չարենցը: Երբ նրան մարդիկ տեսնում էին, մատով ցույց էին տալիս ու ասում՝ Չարե՜նցը, Չարե՜նցը: Շատ սիրված էր»: Նրա խոսքերի վրա դիմացից եկող մեկն ուրախ բացականչեց՝ Շիրա՜զը, Շիրա՜զը: Ասի՝ դուք էլ եք շատ սիրված ժողովրդի կողմից:

Ղարաբաղի ճակատագրի վերաբերյալ, ինչքան նկատել եմ, ամենաշատ գուշակություններ արել են Նժդեհը և Շիրազը: Երկուսն էլ ասել են, որ հայ ժողովրդի զարթոնքը սկսվելու է Ղարաբաղից:

Շատ էր սիրում թոնրում թխած ընկույզով գաթա: Մայրս այդ գործի լավ վարպետ էր: Շիրազի համար միշտ թխում էր, տանում էի: Նոր տարվա կապակցությամբ մորս թխած գաթաները և այլ ուտեստներ վերցրած՝ եղբորս հետ գնացինք՝ Շիրազի Ամանորը շնորհավորելու: Ողջագուրվեցինք: Քիչ անց ներս մտան երկու երիտասարդ: Ծանոթացրեց՝ ասելով՝ Ղարաբաղի իմ լավ բարեկամներն են: Մեկի անունը Արա էր (առաջին և վերջին անգամ տեսա Շիրազի Արա որդուն), մյուսինը՝ կարծեմ Փարեմուզ: Կոնյակ և ուտելիք էին բերել: Եղբորս ասացի, որ մեր բերածներն էլ հանի: Շիրազը երբ տեսավ գաթաները, շատ ուրախացավ, ասաց՝ կտրիր: Արայիկը լցրեց բաժակները: Երբ ուզում էր լցնել Շիրազի բաժակը, նա ձեռքի ափով ծածկեց այն՝ ասելով՝ «Մի լից, մի լից, օձի գանգ է երևում այդ բաժակում»: Բայց Արան ձեռքը բռնեց՝ ասելով. «Տղաները Ղարաբաղից են եկել, չե՞ս ուզում խմել»: Տեղի տվեց:

1965 թվականը ամենաուժեղ զարթոնքն էր հայ ժողովրդի պատմության մեջ: Իմ հիշողության մեջ մեխվել են այդ իրադարձությունները: Առաջին անգամ նշվում էր Ցեղասպանության 50-ամյակը: Մեծ հավաք էր կազմակերպվել: Հոծ բազմությունը, երբ անցնում էր բանաստեղծի տան մոտով, սկսեց «Շի-րազ, Շի-րազ» գոռալ: Նրա տան վերևի պատշգամբում մի միջահասակ մարդ էր կանգնած մայկայով, հարցրին, թե ուր է Շիրազը: Վերջինս անտարբեր ասաց. «Գնացել է Թուրքիա՝ հողերը չափելու»:

Հետո իմացանք, որ Շիրազին կանչել էին էջմիածին, իբր այնտեղ Սփյուռքից եկած պատվիրակության առաջ ելույթ ունենալու: Խաբել տարել էին, տնային կալանքի ենթարկել:

Մեր ինստիտուտի ռեկտորը մի անգամ ինձ խնդրեց Շիրազին հարցնել՝ «Ստալին» բանաստեղծությունը Զարյա՞նն է գրել, թե՞ Չարենցը; Այն ժամանակ այդպիսի խոսակցություններ կային: Ասաց՝ Զարյանն է գրել, բայց Չարենցը լավ ստուգել է:

Մի անգամ հարցրի. «Ընկեր Շիրազ, ինչո՞ւ ես բաժանվել Սիլվայից»: Ասաց. «Ազիզ ջան, Ուկրաինայում հայ գրականության և արվեստի տասնօրյակ էր: Ինձ չէին ընդգրկել: Եկա, տեսնեմ կինս պատրաստություն է տեսնում: Ասացի՝ էդ ո՞ւր: Կինս ձայն չհանեց: Ասացի. «Չես գնալու»: Բայց նա շարունակում էր իր գործը: Երրորդ անգամ երբ հարցրի՝ էլի չպատասխանեց. ասացի՝ դե գնա, էլ չգաս»: Գնաց, եկավ, չընդունեցի»: Սա էր նրա բացատրությունը: Հարցրի՝ իսկ տղադ ո՞ւմ է համակրում, քե՞զ, թե՞ մորը: Ասաց՝ ոչ ինձ, ոչ՝ նրան: Մեջտեղում կանգնած է:

Մեր ինստիտուտում հանդիպում էր կազմակերպվել Շիրազի հետ: Այդ ժամանակ մեր պրոռեկտորի 19-ամյա աղջիկը մահացել էր ծննդաբերության ժամանակ: Ինքն էլ Կիրովաբադից էր՝ Առաքելյան ազգանունով: Ինձ հետ մեր բարբառով էր խոսում, համարում իր համերկրացին: Ինձ խնդրեց, որ Շիրազին ասեմ՝ մի քառատող գրի աղջկա մասին, որպեսզի փորագրի նրա շիրմաքարին: Հաջորդ օրը գնացի Շիրազի մոտ, պատմեցի: Մի երկու օր չանցած՝ փողոցում հանդիպեցինք. ասաց, որ պատրաստ է: Հաջորդ օրը գնացի, ինձ տվեց. քառատող չէր, բանաստեղծություն էր: Հանձնեցի Առաքելյանին, ուրախությունից լացեց (չգիտեմ, դա նույնպես ընդգրկվե՞լ է գրքում, ձեռագիր էր տվել): Չնայած առիթը տխուր էր, բայց անչափ ուրախացել էր, որ Շիրազի խոսքերը պիտի փորագրի աղջկա շիրմաքարին:

…Ուկրաինայի արվեստի և գրականության օրերն էին Հայաստանում: Լենինի պողոտայով, Սայաթ-Նովայի արձանի մոտով Շիրազի հետ իջնում էինք: Նրանց տուն էինք գնում: Բանալիների տրցակը մատներով խաղացնում էր, հետն էլ կրկնում. «Շևչենկո-Մևչենկո, Շևչենկո-Մևչենկո»: Դիմացից գալիս էին ուկրաինացի, ռուս գրողներ: Ասի՝ ընկեր Շիրազ, անհարմար է, կլսեն: Հետո էլ ավելացրի՝ բա դու չե՞ս գրել.«Դաշտն Արարատյան՝ իմ սեղան սիրին, Սևանն՝ իմ գինին լեռների մեջ լուրթ, Բաժակս խփեմ Արարատ սարին, Կենացը խմեմ ռուս ժողովրդի»:

Ասաց՝ գրել եմ, որ մեզ լավ աչքով նայեն, բայց պարզվել է, որ ցինիկաբար են վարվել մեզ հետ:

- Ինչպե՞ս,- հարցրի:

- Բա չե՞ս կարդացել այդ սիֆիլիտիկ Լենինին. հատորներից մեկում գրել էր, որ թող չլինի Սովետական Հայաստանը, դրանից Սովետական Միությունը չի տուժի: Դրանից էլ մեծ ցինիկությո՞ւն:

Մեր համագյուղացի Միշա Միքայելյանը (մաթեմատիկայի ճանաչված ուսուցիչ) և Արմեն Աթասյանը մի անգամ ինձ խնդրեցին, որ տանեմ Շիրազի հետ ծանոթացնեմ: Մարտակերտի միլիցիայի աշխատակից, կապիտան Արամայիսը (ազգանունը չհիշեց – *հեղ.*) խնդրեց, որ ինքն էլ գա: Գիտեի, որ Շիրազը միլիցիայի աշխատողներից խուսափում է, բայց անհարմար զգացի ասել: Գնացինք: Շիրազին նախօրոք զգուշացրել էի, որ ընկերներս ուզում են իր հետ հանդիպել: Դռան զանգը տվեցինք, ինձ անմիջապես քաշեց աշխատասենյակ, թե օրգանի աշխատողն ինչ գործ ունի այստեղ: Ես ասացի, որ հայոց լեզվի մասնագետ է և երկրպագում է նրան: Հանգստացավ:

Նրա հարգը ամենից շատ Սփյուռքն էր պահում: Ես նրա փոստատարն էի. ինձ էր վստահում իր նամակները փոստարկղ գցելը: Տեսնում էի, թե ինչքան շատ էր գրում արտասահման…

Անկեղծ ասած՝ չգիտեմ մեկ այլ մեծություն, որի թաղմանն այդքան շատ մարդ հավաքվեր: Կարդացել եմ Բեթհովենի, Անդրանիկ զորավարի հուղարկավորությանը բազմահազար մարդկանց մասնակցության մասին: Բայց Շիրազինն աննախադեպ էր: Սփյուռքահայությունը ստիպեց մի քանի օր պահել աճյունը, մինչև արտասահմանից պատվիրակությունը գար:

Ես նրան շատ եմ գրկել հոգեկան ծանր վիճակներում և նրա մեծ սրտի տրոփյունը լսել:

Ափսոս, ոչ մի գրավոր վկայություն նրա հետ հանդիպումներից չի մնացել: Նկարվել չեմ սիրել, իսկ մակագրված գրքերը տարել, չեն բերել: Ասենք, եթե անգամ բերած էլ լինեին, մեկ է, չէին մնա, որովհետև Արցախյան պատերազմի ժամանակ մեր գյուղը թուրքերը հիմնահատակ ավերել, հրո ճարակ են դարձրել: Մեծ բանաստեղծի մասին հուշերս մինչև հիմա իմ մտքում էին, և ուրախ եմ, որ ձեր օգնությամբ վերջապես դրանք թղթին հանձնվեցին:

Գրի առավ
Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 09.02.2015թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: